Համառոտ Վարդարան

Հույսի*

Հանուն Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու:

Ամեն

Հավատո Հանգանակ

Հավատում եմ Միասնական Աստծուն՝

Երկնքի ու Երկրի Արարչին,

որ ներկա է ամբողջ Կյանքում:

Հավատում եմ Նրա Օրենքի արդարությանը,

և հնազանդորեն ենթարկվում եմ

Նրա Օրենքի Իմաստությանը:

Հավատում եմ Երկնքի Արքայությանը՝

ինչպես Երկրի վրա, այնպես էլ Երկնքում:

Հավատում եմ Աստծո Միասնությանը՝

Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու:

Ամեն

Հայր մեր

Հայր մեր, որ Երկնքում ես,

սուրբ լինի Քո Անունը.

Քո Թագավորությունը գա.

Քո Կամքը լինի Երկրի վրա, ինչպես որ Երկնքում է.

մեր ամենօրյա հացը տուր մեզ այսօր,

և ներիր մեր մեղքերը,

ինչպես որ մենք ենք ներում մեզ պարտք եղողներին.

և մի տանիր մեզ փորձության,

այլ փրկիր մեզ չարից,

քանզի Քոնն է արքայությունը

և զորությունը և փառքը հավիտենական.

Ամեն

Աստվածամայր

Ցնծա՛, Սուրբ Կույսդ Աստվածամայր,

Բարեշնորհ Մարիամ,

Տերը Քեզ հետ է.

օրհնյալ ես Դու կանանց մեջ,

և օրհնյալ է պտուղը որովայնիդ,

քանզի ծնեցիր մեր հոգիների Փրկչին:

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

Հայր մեր

1. Ձեր բոլոր գործողություններն ու մտքերը պետք է համապատասխանեն Աստծո Կամքին: Սակայն շատերիդ մոտ հարց է առաջանում, թե ձեզ շրջապատող քաոսի պայմաններում ինչպե՞ս իմանալ, թե ինչն է համապատասխանում Աստծո Կամքին և ինչը՝ ոչ. ո՞րն է Աստվածային որոշում և որը՝ ոչ: Ինչպես միշտ, հիմնական և գլխավոր հանձնարարականն այն կլինի, որ ականջալուր լինեք ձեր սրտի ձայնին: Քանզի հենց այդտեղ կարող եք գտնել ձեր բոլոր հարցերի պատասխանները: Իսկ ի՞նչ անեն նրանք, ովքեր չեն լսում պատասխանները:

Աստվածամայր

2. Ցավոք, Երկրի վրա ունեցած շատ ու շատ մարմնավորումների ընթացքում շատ-շատերի սրտերը ծածկվել են անթափանց զրահով, և շատ դժվար է դարձել այդ զրահի միջով Աստծո պատասխանը լսելը: Դուք ձեր կյանքերի ընթացքում բախվել եք շատ ողբերգական իրավիճակների հետ: Եվ դրանք ձեր սրտերին այնպիսի վերքեր են հասցրել, որոնք ցավ ու մորմոք են պատճառում նույնիսկ այն հաստ զրահի տակից, որ հագցրել եք ձեր սրտին, որպեսզի այդ ցավերը չզգաք:

Աստվածամայր

3. Ի՞նչ անել ուրեմն... Ձեր սրտերը պետք է բերվեն աշխատունակ վիճակի: Պետք է շերտ առ շերտ սրտի վրայից հեռացնեք բոլոր այն բացասական ազդեցությունները, որոնք եղել են անցյալում և կան ներկայում: Ձեր սրտերը շատ զգայուն են: Եվ, նախքան ձեր սրտերը բացել սովորելը, պետք է հոգ տանեք, որ ձեր կյանքի արտաքին պայմանները նոր վերքեր չառաջացնեն ձեր սրտերում: Ցավոք, ձեր աշխարհում շա՛տ են այնպիսի բաները, որոնք ստիպում են սրտին կծկվել անտանելի ցավից: Սակայն միշտ չէ, որ այդպես է եղել:

Աստվածամայր

4. Մարդկության պատմության ընթացքում եղել են երջանիկ դարաշրջաններ, երբ մարդիկ ուրախություն էին պարգևում միմյանց, ուրախանում էին արևով, ողջ կենդանական աշխարհով: Ուրախությունն էր տիրում ամենուրեք: Դա շատ վաղուց էր՝ այն հինավուրց դարերում, երբ Երկրի վրա Ոսկեդար էր: Մարդկության լավագույն ներկայացուցիչներն ու նրանց Ուսուցիչները գտնվում էին մարմնավորման մեջ: Բնությունն ու ողջ շրջապատը ներկայանում էին որպես աստվածության ներդաշնակ դրսևորում: Այն ամենը, ինչ գոյություն ուներ այդ հրաշք ժամանակներում, պարուրված էր երջանկությամբ: Երջանկության և ուրախության վիճակները տիրապետող էին ողջ կենդանականի համար: Նույնքան կատարյալ ու Սիրով հագեցած էին նաև մարդկանց փոխհարաբերությունները: Ամեն ինչ խելամիտ էր դասավորված:

Աստվածամայր

5. Եվ այդ դարերի ընթացքում մարդկանց սրտերը անթափանց զրահով ծածկվելու կարիքը չէին զգում: Մարդկանց սրտերը բաց էին բոլորի առջև, քանզի դրանցում բացակայում էին բացասական դրսևորումները: Եվ մարդկանց սրտերին քաջ հայտնի էր, թե ինչպես պետք է վարվել համաձայն Աստվածային օրենքի: Դա շա՛տ վաղուց էր: Մարդկությունն աստիճանաբար ցած սահեց ու հասավ այնպիսի վիճակի, ինչպիսին այժմ է: Այն ամենը, ինչ ձեր կյանքում տեսնում եք ձեր շուրջը, համապատասխանում է ձեր սրտերի վիճակին: Անհասկացողության զրահը, ատելությունը, հակակրանքն ու անտարբերությունը ծածկի տակ են առել մարդկությանը:

Աստվածամայր

6. Դուք լրիվ չափով ճաշակեցիք անհնազանդության պտուղները: Հենց հատկապես ինքնակամությունն ու ուրիշների հաշվին ինչ-որ բան ձեռք բերելու անհագ ցանկությունը մարդկությանը հասցրին գիտակցության այն վիճակին, որում ներկայումս նա գտնվում է:Ուստի այդ վիճակից դուրս գալու հակադարձ ուղին այն կլինի, որ կյանքի բոլոր ոլորտներում դրսևորվեն դրանց լրիվ հակադիր կերպերը:

Ատելությունն անհրաժեշտ է փոխարինել Սիրով:

Վախն անհրաժեշտ է փոխարինել Սիրով:

Անտարբերությունը, չարությունն ու հակակրանքը պետք է փոխարինվեն բարյացակամությամբ:

Ուրախությունը պետք է փոխարինի նոթոտվածությանը:

Աստվածամայր

7. Ասես կախարդական փայտիկի օգնությամբ՝ բոլոր անաստված հատկանիշները փոխարինվում են Աստվածային հատկանիշներով միայն այն դեպքում, եթե մարդկությունն իր հիմնական զանգվածով եսասիրության, փառասիրության և կյանքից անընդհատ հաճույքներ կորզելու իր վարվելակերպը փոխարինում է այնպիսի վարվելակերպով, որը հիմնված է փոխօգնության, համագործակցության և ի շահ հանուր կյանքին ամեն ինչ տալու ցանկության վրա: Ճիշտ կլինի, եթե ասեք, որ ես իրար հակադրեցի եսասիրության ու մարդասիրության դիրքերը:

Աստվածամայր

8. Այն դեպքում, երբ մարդկային գիտակցությունը հեռանում է Աստվածային թրթռանքներից, ապա մարդ ինքն իրեն կտրում է Աստծուց. նա դադարում է իրեն ապահով վիճակում զգալ, դադարում է Սեր զգալ: Իսկ երբ մարդ վերադառնում է Աստվածային թրթռանքներին, ապա տեղի է ունենում ճիշտ հակառակը: Մարդ զգում է ողջ Արարչության հետ իր միասնությունը, զգում է Սեր, ուրախություն: Նա իրեն բավարարված է զգում, դառնում է հանգիստ ու հավասարակշիռ:

Աստվածամայր

9. Աստվածային աշխարհի սահմանագիծն անցնում է ձեր սրտերով: Հենց այդտեղ՝ զրահի տակ, Աստված է: Եվ այնժամ, երբ ամեն մարդ կկարողանա բացել իր սիրտը, մարդկությունը կվերադառնա այն ժամանակներին, երբ Երկրի մարդիկ մշտապես իրենց զգում էին երջանկությամբ ու Սիրով պարուրված վիճակում:Հավանականություն կա, որ Ոսկեդարի այդ ժամանակները կվերադառնան: Հավանականություն կա, որ Ոսկեդարը մուտք կգործի Երկիր: Եվ մենք սպասում ու գուշակություն ենք անում, թե Երկրի վրա որտե՞ղ պայմաններ կստեղծվեն Ոսկեդարի գալստյան համար:

Աստվածամայր

10. Ես ձեզ չեմ պատմի մեր պլանների մասին: Բայց դուք պետք է գիտենաք, որ ոչ միշտ է երկինքը մռայլ ու անձրևոտ լինում: Կգա ժամանակ, երբ Աստվածային գիտակցության արևը կշողա Երկրի վրա: Միայն կարող եմ ասել, որ Ոսկեդարի գալստյան համար անհրաժեշտ պայմաններն արդեն սկսվում են ստեղծվել, ինչպես նաև պատրաստվում են մարմնավորման և արդեն մարմնավորվում են այն հոգիները, որոնք իրենց մեջ կրում են Ոսկեդարյան գիտակցություն: Եվ լավ կլիներ, եթե դուք այդ հոգիների համար Երկրի վրա այնպիսի պայմաններ ստեղծեիք, որոնցում նրանք կարողանային լրիվությամբ դրսևորել իրենց ունակություններն ու շնորհները: Ես ավարտում եմ իմ այսօրվա ուղերձը և հույս եմ փայփայում, որ դուք ձեր մեջ ուժ կգտնեք, որպեսզի հաղթահարեք ձեր բացասական, նեգատիվ վիճակները՝ հանուն Երկիր մոլորակի ապագայի: ԵՍ ԵՄ Հիլարիոնը:

Աստվածամայր

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

**Վարդարանը կազմված է Հիլարիոն վեհապետի 05.07.2009 թ-ի թելադրության հիման վրա*

Աթենաս Պալլասի համառոտ

Վարդարան

Ուսմունք արդարացի և անարդարացի պատերազմների մասին

(համառոտ Վարդարան՝ Աթենաս Պալլասի 2015 թ-ի դեկտեմբերի 22-ի թելադրության հիման վրա)

Հանուն Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու:

Ամեն

Հավատո Հանգանակ

Հավատում եմ Միասնական Աստծուն՝

Երկնքի ու Երկրի Արարչին,

որ ներկա է համայն Կյանքում:

Հավատում եմ Նրա Օրենքի արդարությանը,

և հնազանդորեն ենթարկվում եմ

Նրա Օրենքի Իմաստությանը:

Հավատում եմ Երկնքի Արքայությանը՝

ինչպես Երկրի վրա, այնպես էլ Երկնքում:

Հավատում եմ Աստծո Միասնությանը՝

Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու:

Ամեն

Հայր մեր

Հայր մեր, որ Երկնքում ես,

սուրբ լինի Քո Անունը.

քո Թագավորությունը գա.

Քո Կամքը լինի Երկրի վրա, ինչպես որ Երկնքում է.

մեր ամենօրյա հացը տուր մեզ այսօր,

և ներիր մեր մեղքերը,

ինչպես որ մենք ենք ներում մեզ պարտք եղողներին.

և մի տանիր մեզ փորձության,

այլ փրկիր մեզ չարից,

քանզի Քոնն է արքայությունը

և զորությունը և փառքը հավիտենական.

Ամեն

Աստվածամայր

Ցնծա՛, Սուրբ Կույսդ Աստվածամայր,

Բարեշնորհ Մարիամ,

Տերը Քեզ հետ է.

օրհնյալ ես Դու կանանց մեջ,

և օրհնյալ է պտուղը որովայնիդ,

քանզի ծնեցիր մեր հոգիների Փրկչին:

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

1. ԵՍ ԵՄ Աթենաս Պալլասը: Ես Կարմայական Վարչության անդամ եմ: Ինձ նաև գիտեն որպես Ճշմարտության Աստվածուհի: Վաղ անցյալում հատուկ իմ պատվին կառուցված տաճարներում մարդիկ պաշտում էին ինձ: Դա հինավուրց ժամանակներում էր, իմ սիրելի Հելլադայում: Իսկ հիմա ես կամենում եմ ձեզ հիշեցնել, որ ես նաև արդարացի պատերազմների հովանավորն եմ:

Աստվածամայր

2. Ձեր աշխարհում ամեն ինչ երկդիմի բնույթ ունի: Ուստի, որքան էլ ձեզ համար տարօրինակ թվա ինձնից սա լսելը, անարդարացի պատերազմներից զատ կան նաև պատերազմներ, որոնք արդարացի բնույթ ունեն: Հետևաբար նախքան այս կամ այն պատերազմին մասնակցելը հարկավոր է շատ լավ կշռադատել այն շարժառիթները, որոնցով առաջնորդվում եք դուք և այն մարդիկ, ովքեր իշխանության կրող են և որոշում են ընդունում պատերազմ սկսելու մասին:

Աստվածամայր

3. Նախ և առաջ դուք պետք է հասկանաք՝ այդ պատերազմով շահադիտական նպատակնե՞ր եք հետապնդում, թե՞ պաշտպանում եք ձեր հողը, ձեր տունն ու ընտանիքն արտաքին թշնամուց, որը ձեզ սպառնում է և հարվածներ հասցնում ձեր հայրենիքին: Շարժառիթը կարևոր է պատերազմի մասնակցող ամեն մի առանձին ռազմիկի համար: Եթե կռվին մասնակցելու գնացող մարդու շարժառիթը շահադիտական է, ապա պատերազմին մասնակցելը նրա համար հավասարազոր է ոչ ճիշտ գործողության կարմայի կուտակման: Շահադիտական շարժառիթ կարող են ծառայել փողը, իշխանությունը, կոչումը կամ պաշտոնը, ինչպես նաև ռազմավարը:

Աստվածամայր

4. Կարմայի օրենքը համայն Տիեզերքի բարդագույն օրենքներից մեկն է: Այդ պատճառով եկեք պարզենք, թե անարդարացի պատերազմին մասնակցելն ինչպես է անդրադառնում մասնակից երկրի և դրա մարդկանց վրա: Իհարկե, ցանկացած պատերազմի ընթացքում բռնություն է կիրառվում, և մարդիկ են զոհվում: Ուստի կարևոր է հասկանալ, թե ինչ կարմա է ձեռք բերում անարդարացի պատերազմ վարող երկիրը:

Աստվածամայր

5. Անարդարացի պատերազմի ամեն մի մասնակից կարմայի իր բաժինն է ունենում: Բայց ամեն մի այդպիսի պատերազմի մասնակից նաև մայր ու հարազատներ ունի: Նրա ամբողջ ընտանիքը և նույնիսկ հեռավոր հարազատներն իրենց վրա են վերցնում անարդարացի պատերազմին

մասնակցողի կատարած սպանությունների ու ավերածությունների կարման: Արդյունքում թուլանում է նրա ընտանիքն ու ամբողջ տոհմը, ինչը կարող է տոհմի ֆիզիկական ու մտավոր այլասերման պատճառ դառնալ:

Աստվածամայր

6. Այդպիսով, անարդարացի պատերազմի կարման ազդում է նույնիսկ այն մարդկանց վրա, ովքեր հեռու են զինված հակամարտությանն անմիջականորեն մասնակցելուց: Բացի այդ, կա նաև անարդարացի պատերազմին մասնակցող ամբողջ երկրի կարման: Այն ընկնում է տվյալ երկրի ամբողջ բնակչության ուսերին և բախշվում հասարակության բոլոր անդամների միջև: Ոպես կանոն, դա հանգեցնում է տվյալ երկրին հատկացվող Աստծո էներգիայի հոսքի դադարեցմանը: Աստծո էներգիայի անբավարար լինելը դրսևորվում է որպես առատության պակաս, սով, տվյալ երկրի բնակչության մի զգալի մասի հոգեկան խանգարումներ՝ շիզոֆրենիա, դիվահարություն, ընկճվածություն, ինքնասպանության հակում, ագրեսիա:

Աստվածամայր

7. Իհարկե, անարդարացի պատերազմի կարմայի մեծ մասն ընկնում է այն մարդկանց ուսերին, որոնք նման պատերազմ սկսելու որոշում են կայացնում: Սակայն, ինչպես վերն ասացի, կարմայական բեռից բաժին է հասնում նաև այդ երկրում ապրող ամեն մի բնակչի: Քանզի ոչ մի պատերազմ չի կարող կայանալ, եթե չլինեն այն մարդիկ, որոնք համաձայնվում են մասնակցել նման պատերազմի՝ հանուն անձնական շահի, թալանի կամ էլ հանուն կենդանի թիրախների վրա իրենց սպանելու հմտությունները կատարելագործելու:

Աստվածամայր

8. Առողջ հասարակությունը երբեք թույլ չի տա, որ իրեն ներգրավեն անարդարացի պատերազմի մեջ, քանի որ շատ լավ գիտակցում է, որ այդպիսի պատերազմին մասնակցելը պատասխանատվություն է դնում իր հետագա սերունդների ուսերին:

Աստվածամայր

9. Իսկ հիմա խոսենք արդարացի պատերազմի մասին: Եթե ռազմիկը մարտի է գնում իր երկիրը, հողը և ընտանիքը պաշտպանելու նպատակով և չունի շահադիտական մղումներ, եթե անշահախնդրորեն պատրաստ է իր կյանքը զոհել հանուն իր երկրի բարեկեցության, ապա այդ գործողությունն արդար է համարվում, և անգամ նրա զոհվելը ոչ թե թուլացնում է նրա ընտանիքն ու տոհմը, այլ, ընդհակառակը, հարստացնում է նոր էներգիայով:

Աստվածամայր

10. Հանուն մերձավորների ինքնազոհաբերման գնալը կարող է բռնություն չդիտվել այն դեպքում, եթե մեկը պատրաստ է կենդանի վահանի դեր կատարել հարձակվողի ու իր մերձավորների

միջև: Ինքնազոհաբերության այդ բարձրագույն գործողությունը բարի կարմա է ստեղծում ամբողջ տոհմի և երկրի համար: Իմ այսօրվա Ուղերձի նպատակն էր բացատրություններ տալ արդարացի և անարդարացի պատերազմների մասին: Ես կարծում եմ, որ աշխարհում ներկայումս հաստատված պայմաններում իմ այս Ուսմունքն օգտակար կլինի ձեզ համար, և դուք կկարողանաք այն կիրառել ձեր կյանքում: **ԵՍ ԵՄ Աթենաս Պալլասը:**

Աստվածամայր

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

Կոնֆուցիոսի Վարդարանը

Մենք պետք է Աստծուն մեր միջոցով

դրսևորվելու հնարավորություն տանք

Հանուն Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու, Ամեն

Հայր մեր

Հայր մեր, որ Երկնքում ես,

սուրբ լինի Քո Անունը.

Քո Թագավորությունը գա.

Քո Կամքը լինի Երկրի վրա, ինչպես որ Երկնքում է.

մեր ամենօրյա հացը տուր մեզ այսօր,

և ներիր մեր մեղքերը,

ինչպես որ մենք ենք ներում մեզ պարտք եղողներին.

և մի տանիր մեզ փորձության,

այլ փրկիր մեզ չարից,

քանզի Քոնն է արքայությունը

և զորությունը և փառքը հավիտենական.

Ամեն

Աստվածամայր

Ցնծա՛, Սուրբ Կույսդ Աստվածամայր,

Բարեշնորհ Մարիամ,

Տերը Քեզ հետ է.

օրհնյալ ես Դու կանանց մեջ,

և օրհնյալ է պտուղը որովայնիդ,

քանզի ծնեցիր մեր հոգիների Փրկչին:

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

1. Զգտեք կենտրոնանալ ձեր սրտի վրա. սրտի զարկերի վրա: Ունկնդրե՛ք ձեր շնչառությանը: Ներշնչում... Արտաշնչում... Ձեր սրտի աշխատանքն ու ձեր շնչառությունը որևէ կերպ կապված չեն այն պետության հետ, որում ապրում եք: Նաև կապված չեն այն դերի հետ, որ խաղում եք կյանքում: Ճիշտ նույն կերպ նաև Աստվածային Ճշմարտությունն է. այն ինքնին գոյություն ունի և կախված չէ ձեր գիտակցությունից ու ձեր մտքերից: Այդ դեպքում ինչու՞ դուք գոյություն ունեք, եթե այս աշխարհը կարող է հրաշալի յոլա գնալ առանց ձեզ: Այս հարցը ձեզ չի՞ հետաքրքրել: Երբևէ ձեզ հարցրե՞լ եք, թե ինչու եք ապրում: Կարծում եմ, որ այդ հարցը ձեր կյանքում գոնե մեկ

անգամ կանգնել է ձեր առջև: Իսկ որոշների առաջ այն ծառացել է այնքան համառորեն և այնքան հաճախ, որ կյանքի իմաստի որոնումը տառացիորեն նրանց համար վերածվել է հենց կյանքի իմաստի:

Աստվածամայր

2. Իրավացի եք, սիրելինե՛րս, պատվարժան խնդիր է՝ պարզել, թե ինչու եք ապրում, և ինչու գոյություն ունի այն ամենն, ինչը շրջապատում է ձեզ: Երբ ես մարմնավորման մեջ էի, այդ հարցը տառացիորեն գերել էր ինձ: Օրեր էին լինում, երբ տեղս չէի գտնում՝ նորից ու նորից փորձելով գտնել այդ հարցի պատասխանը: Ես հավատացյալ մարդ էի և ընդունում էի այն աշխարհայացքը, որն ընդունված էր ինձ շրջապատող հասարակության մեջ. այնքան ժամանակ, քանի դեռ չէի հասկացել, որ աշխարհընկալման այդ համակարգը ստեղծված է մարդկանց կողմից՝ այնպիսի մարդկանց կողմից, ինչպիսին ես ինքս եմ: Հասուն մարդ դառնալուն զուգընթաց՝ ես հասկացա, որ կատարյալ չեմ և, այդ պատճառով, իմ յուրաքանչյուր միտքն արդեն ոչ կատարյալ է դառնում՝ նախքան այն բարձրաձայն արտահայտելը: Ինչու՞ ես կատարյալ չեմ: Եվ ինչու՞, որքան էլ ջանում եմ, չեմ կարողանում հաղթահարել իմ ներսի այդ անկատարությունները: Ձեզ ծանո՞թ են այս հարցերը: Դուք է՞լ եք այդ հարցերը տվել ձեզ: Ժամանակի ընթացքում այդ հարցի պատասխանը հիմք դարձավ ուսուցման համակարգի համար, ինչը ես տալիս էի այն մարդկանց, որոնք ցանկանում էին ուսուցանվել ինձ մոտ:

Աստվածամայր

3. Ես պարզորոշ գիտակցում էի, որ իմ ներսում կա իմ իսկ Բարձրագույն, ավելի կատարյալ մասը: Եվ ես կարողանում էի հաղորդակցվել այդ մասի հետ: Բայց և գիտակցում էի, որ իմ այդ մասի դրսևորմանը ինքս եմ խանգարում. ոչ թե իմ սահմաններից դուրս որևէ մեկը, այլ հենց ինքս: Ես ենթադրում էի, որ ես և մյուս բոլոր կենդանի էակները ստեղծված են Նրա կերպարով, ով ստեղծել է այս աշխարհը, և ով իր դիրքով անհամեմատ բարձր է գտնվում մեզնից: Եվ մենք բոլորս կապված ենք Նրա հետ և մի անբաժանելի Միասնություն ենք կազմում: Եվ ճիշտ այնպես, ինչպես ես ունեմ իմ ներսում իմ Բարձրագույն մասը, այս Աշխարհի Ստեղծողն ու Արարիչը նույնպես ունի իր Բարձրագույն մասը, ինչպես և՝ իր ցածրագույն մասը: Իսկ Նրա այդ ցածրագույն մասը ես եմ՝ մարմնավորման մեջ. և՛ ես, և՛ մյուս կենդանի էակները, և՛ ամբողջ Երկիրը, որը երևում է ինձ, որքան աչքս կտրում է:

Աստվածամայր,

4. Մենք բոլորս Նա ենք մարմնավորման մեջ: Եվ Նա մեր միջոցով ապրում է, ստեղծում, ճանաչում: Մեր միջոցով՝ յուրաքանչյուր կենդանի էակի միջոցով, Նա ճանաչում է Ինքն իրեն: Մենք բոլորս նրա բջիջներն ու անոթներն ենք: Մենք կազմում ենք նրա մարմինը: Եվ մենք բոլորս կապված ենք թե՛ Նրա հետ, թե՛ մեկս մյուսի հետ: Այն ամենն, ինչը սահմանազատում է մեզ իրարից և Նրա հետ Միասնությունից, ենթակա է հաղթահարման: Ուստի ես ուսուցանում էի և շարունակում եմ այժմ ուսուցանել միայն մեկ պարզ բան: Ձեզնից յուրաքանչյուրին ես

հրավիրում եմ աշխատել իր այն մասի վրա, որը խանգարում է միասնական լինել Արարչի հետ: Աշխատել իր այն մասի վրա, որը թույլ չի տալիս լրիվ միասնության վիճակում գտնվելու Աստծո, Արարչի, Ատմանի, Բարձրագույն Բանականության հետ: Կարևոր չէ, թե ինչպես կկոչեք այն, որի մի մասն եք դուք իրականում հանդիսանում:

Աստվածամայր

5. Դուք ոչինչ չեք կարող անել այլ մարդու փոխարեն: Դուք մի այլ մարդու չեք կարող ստիպել անելու որևէ բան, որը ձեզ պետք է: Ավելի ճիշտ՝ դուք դա կարող եք անել, բայց ձեզ հարկ կլինի բռնություն կիրառել: Դուք միայն ուժով կարող եք ստիպել որևէ մեկին՝ աշխատել ձեզ համար կամ կատարել ձեր հրամանները: Կարևոր չէ՝ այդ ուժը ֆիզիկական է, թե ձեր կողմից գրված օրենքի տեսք ունի:

Աստվածամայր

6. Հապա փորձե՛ք ձեր մարմնի մեջ սրտին ստիպել շնչել, իսկ թոքերին՝ արյուն մղել արյունատար անոթներով: Դա ձեզ չի՛ հաջողվի: Իսկ եթե դիմենք պատմությանը, ապա այն հենց կազմված է այնպիսի դրվագներից, երբ ինչ-որ մեկը փորձում է ստիպել մի ուրիշին, որ անի այն, ինչ իրեն է պետք: Այստեղից էլ հենց ծագել են բոլոր պատերազմներն ու աշխարհի բոլոր անարդար դրսևորումները: Եվ այդ բոլոր անարդարությունների հիմքում ընկած է ցանկությունը, որ մեկն անի այն, ինչ մյուսին պետք է: Ահա և վերադարձանք սեփական անկատարության թեմային:

Աստվածամայր

7. Երբ երիտասարդ էի, ես իսկապես մտածում էի, թե կարող եմ իմ համոզմունքի ուժով և անձնական օրինակով աշխարհին ոգեկոչել փոփոխության: Ես շատ ջանք ու եռանդ ծախսեցի՝ փորձելով համոզել մարդկանց, որ ճիշտ գործեն և ճիշտ պահեն իրենց: Իմ ուժերը չհերիքեցին, որպեսզի համոզեմ մարդկանց, որ վարվեն այնպես, ինչպես իմ կարծիքով խելացի կլիներ: Այնժամ ես փորձեցի գործել այն մարդկանց հետ համատեղ, որոնք կիսում էին իմ համոզմունքները: Սակայն, միևնույնն է, նախկինի պես իմ ուժերը չէին հերիքում:

Աստվածամայր

8. Հավատացե՛ք ինձ, ես չափազանց շատ ջանք թափեցի, որպեսզի համոզեմ մարդկանց, որ նրանք ճիշտ չեն ապրում, որ նրանք գոնե մի փոքր լսեն ինձ, թե ինչպես արժե ապրել: Անցնում էր տարին տարու հետևից, տասնամյակը տասնամյակի հետևից, իսկ վիճակն աշխարհում չէր փոխվում՝ չնայած իմ ձգտմանն ու թափած ջանքերին: Ինչու՞: Ես միայն մի փոքրիկ ավազահատիկ էի՝ այս տիեզերքի օրգանիզմի մի փոքրիկ բջիջը: Եվ ես փորձում էի համոզել ամբողջ տիեզերքին, որ նա պետք է ապրի իմ օրենքներով:

Աստվածամայր

9. Եվ շատ տասնամյակներ անց վերջապես գիտակցեցի, որ ողջ Երկրի վրա միակ մարդը, որ խանգարում էր ինձ, հենց ինքս էի: Դա իմ անչափ փառասիրությունն էր և իմ անչափ վստահությունը, թե իբր ճանաչել եմ ամբողջ Ճշմարտությունն ու կարող եմ այն ուսուցանել ուրիշներին: Իմ արտաքին մարդ-արարածը, փոխանակ ենթարկվելու այն օրենքին, որը գործում է այս տիեզերքում, փորձում էր ստիպել ողջ տիեզերքին, որ ապրի իր օրենքով: Ես հասկացա գլխավոր Ճշմարտությունը: Եվ պետք է ձեզ ասեմ, որ արժեր ծախսել ամբողջ կյանքը՝ այդ Ճշմարտությունը գիտակցելու համար: Անիմաստ ու անօգուտ է սեփական օրենքներ մտցնել այն աշխարհում, որում ապրում ենք: Մենք պետք է ենթարկվենք Օրենքին, որն ընկած է այս տիեզերքի հիմքում, և որն արդեն ստեղծվել է այս տիեզերքի արարման պահին:

Աստվածամայր

10. Եվ Օրենքն այնպիսին է, որ մենք պետք է հրաժարվենք կյանքում մեզ՝ մեր էգոն, դրսևորելու ցանկությունից. մենք պետք է մեզնից կախված ամեն ինչ անենք, որպեսզի հնարավորություն տանք Աստծուն մեր միջոցով ինքն իրեն դրսևորելու: Այդ դեպքում մենք կկարողանանք վերականգնել մեր Միասնությունը: Եվ մենք կկարողանանք մասնակցել այս տիեզերքի Արարչի մտահղացման իրագործմանը: Եվ դա այն խնդիրն ու գործն է, որ պետք իրագործի յուրաքանչյուրը: Եվ չկա տիեզերքում որևէ մեկը, որ այդ գործն անի ձեր փոխարեն: Ուրեմն՝ այդ աշխատանքն ամենակարևորն է: Եվ այդ աշխատանքի կատարումն այն կյանքի իմաստն է հենց, որը փնտրում եք ձեր սահմաններից դուրս ու չեք կարողանում գտնել: Ես տալիս եմ ձեզ իմ երկրային կյանքի ընթացքում ունեցած մտորումների պտուղը: Բայց ես չեմ կարող ստիպել ձեզ, որ ճաշակեք այդ պտուղը: Ինքներդ պետք է դա անեք: Ձեզնից դուրս ոչ ոք չի կարող ձեր փոխարեն կատարել ձեր աշխատանքը:

Աստվածամայր

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

Հանուն Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու:

Ամեն

Կութհումիի Վարդարանը

Դուք պետք է ձգտեք վերահսկել ձեր մտքերն ու զգացմունքները

Հանուն Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու, Ամեն

Հայր մեր

Հայր մեր, որ Երկնքում ես,

սուրբ լինի Քո Անունը.

Քո Թագավորությունը գա.

Քո Կամքը լինի Երկրի վրա, ինչպես որ Երկնքում է.

մեր ամենօրյա հացը տուր մեզ այսօր,

և ներիր մեր մեղքերը,

ինչպես որ մենք ենք ներում մեզ պարտք եղողներին.

և մի տանիր մեզ փորձության,

այլ փրկիր մեզ չարից,

քանզի Քոնն է արքայությունը

և զորությունը և փառքը հավիտենական.

Ամեն

Աստվածամայր

Ցնծա՛, Սուրբ Կույսդ Աստվածամայր,

Բարեշնորհ Մարիամ,

Տերը Քեզ հետ է.

օրհնյալ ես Դու կանանց մեջ,

և օրհնյալ է պտուղը որովայնիդ,

քանզի ծնեցիր մեր հոգիների Փրկչին:

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

1. Ձեր գիտակցությունը նման է որոշակի ծավալով ամանի: Եվ յուրաքանչյուր մարդու գիտակցությունը սահմանափակ է, երբ նա գտնվում է մարմնավորման մեջ: Ազատ կամքի պարգևի շնորհիվ դուք ինքներդ եք որոշում, թե ինչով լցնել ձեր գիտակցության ծավալը: Լինում է այնպես, որ աշակերտը պատրաստ է յուրացնել որոշակի ծավալի գիտելիքներ, սակայն նրա գիտակցությունը չունի անհրաժեշտ մղումն ու ուղղվածությունը: Այդ դեպքում նա գերադասում է գիտակցության իր այդ ծավալը լցնել այն ամենով, ինչը նրան հանդիպում է արտաքին աշխարհում. այն ամենով, ինչ նա կարդում է թերթերում, դիտում է հեռուստատեսությամբ, լսում է ռադիոյով: Մինչև որոշակի փուլի հասնելն այդպիսի ամենակուլությունը թույլատրելի է: Բայց՝ մինչև որոշակի փուլ:

Աստվածամայր

2. Եթե մարդն ինքը ջանքեր չգործադրի ֆիզիկական աշխարհից իր արտաքին գիտակցության մեջ թափանցող տեղեկատվության հոսքը սահմանափակելու համար, ապա նա իր գիտակցությունը կլցնի անպետք բաների զանգվածով, իսկ երբ վրա հասնի իրական գիտելիք ստանալու տիեզերական պահը՝ շնորհիվ նրա, որ Երկնոլորտները որոշում են կայացնում չհամբարձված մարդկությանը տալ այդ գիտելիքը, ապա այդպիսի անհատի գիտակցությունը պարզապես ունակ չի լինի որևէ նոր բան իր մեջ տեղավորել: Դեռ ավելին, տեղեկատվության այդ ամբողջ քաոսի մեջ, որը պարունակում է նրա արտաքին գիտակցությունը, նա ունակ չի լինի կողմնորոշվելու: Նրա համար աշխարհիկ մամուլից ստացած տեղեկությունները նույն արժեքը կունենա, ինչ Վեհապետների թելադրություններից ստացված տեղեկատվությունը:

Աստվածամայր

3. Այդ տեղեկատվական աղբի մի մասը տեղափոխվում է ենթագիտակցության մեջ և այնտեղ նստվածք տալիս: Եվ երբեմն, երբ դեպի ներս քշված որևէ հոգեբանական խնդրի հրեշ նմանատիպ թրթռումներ է ստանում, այսպես կոչված, զանգվածային տեղեկատվության միջոցներից, ապա մարդու արտաքին վարքում դրսևորվում է անկանխատեսելի և որևէ շրջանակի մեջ չտեղավորվող այնպիսի արդյունք, որ ոչ մի հոգեբան չի կարողանա ձեզ օգնել անսպասելիորեն ձեր առջև ծառացած հոգեբանական խնդրի լուծման գործում:

Աստվածամայր,

4. Բոլոր խնդիրները դուք ինքներդ եք ստեղծում ձեզ համար. հատկապես այն պահին, երբ առանց հետևանքների մասին մտածելու, ձեր գիտակցության ծավալի մեջ եք խցկում այն ամբողջ տեղեկատվությունը, որի հետ բախվում եք ձեր կյանքում: Ձեզ ադեն մի քանի անգամ այս դեսպանորդի միջոցով ասվել է, որ ձեր աշխարհում ձեր շուրջը եղած տեղեկատվության 90 տոկոսը կեղծ է և անպետք՝ որպես հոգևոր էակներ ձեր զարգացման համար: Ըստ այդմ, ես առաջարկում եմ նախ և առաջ սահմանափակել ձեր ամենակուլությունը: Չարժե' չափազանց շատ հենվել այն տեղեկատվության վրա, որը հասնում է ձեզ արտաքին աշխարհից:

Աստվածամայր

5. Նախ և առաջ դուք պետք է ձգտեք վերահսկել ձեր մտքերն ու զգացմունքները: Գտե'ք օրեկան 10-15 րոպե ժամանակ, երբ ձեզ ոչինչ չի շեղում: Դուք դա կարող եք անել քնելուց առաջ: Փորձե'ք հետևել այն բանին, թե ինչի մասին եք մտածում: Կողքից դիտե'ք ձեր մտքերը: Ուսումնասիրե'ք դրանք: Պատկերացրեք, որ ձեր մտքերը ակվարիումի ձկներ են: Ահա դեպի ձեզ է լողում մի միտք: Զննե'ք այն: Ինչի՞ հետ է կապված այդ միտքը: Եթե այդ միտքը ձեզ կապում է այս աշխարհին, ապա բաց թողեք, թող գնա: Այն պետք չէ ձեր հոգևոր աճի համար: Հետո դիտարկեք ձեր հաջորդ միտքը, հետո՝ էլի հաջորդը:

Աստվածամայր

6. Ձեր գիտակցությունն այդպիսով լցված է շատ մտքերով, որոնք հանդիսանում են ոչ այլ ինչ, եթե ոչ էներգիա, որը դուք ներքաշում եք դրսից, և որը համահունչ է այն էներգիային, որը պարունակվում է ձեր զգացմունքային և մենտալային մարմիններում: Երբ դուք այդ եղանակով կսովորեք վերլուծել այն ամենը, ինչ մտածում եք, ապա վերլուծեք ամբողջ օրվա ձեր մտքերը: Եվ դուք կհասկանաք, որ ձեր գիտակցությունն այնպես է ծանրաբեռնված ոչ-պետքական տեղեկատվության մշակմամբ, որ ձեր գիտակցության հզորությունն այլևս չի հերիքում, որպեսզի սկսեք մշակել ձեր զարգացման համար իսկապես կարևոր տեղեկատվությունը: Ահա թե ինչու է ամենագլխավորը հանդիսանում այն որոշումն ընդունելու պահը, որ դուք այլևս չեք լցնի ձեր գիտակցությունը շրջապատող ֆիզիկական աշխարհից եկող անպետք տեղեկատվությամբ:

Աստվածամայր

7. Դրանից հետո հնարավոր է, որ դուք որոշեք օգտվել որևէ մեդիտատիվ ուղեցույցից, որը կօգնի ձեզ ազատվել ձեր այն մտքերից, որոնք կապում են ձեզ ձեր աշխարհի հետ: Յուրաքանչյուր մեդիտատիվ ուղեցույցի նպատակը, եթե այն ճշմարիտ է, հանդիսանում է մտքերից ազատ վիճակին հասցնելը: Եվ եթե ձեզ հաջողվի պահպանել այդ մտքերից ազատ վիճակը բավականին երկար ժամանակով, ապա դուք կկարողանաք մուտքի իրավունք ստանալ ճշմարիտ տեղեկատվության համար, որն իսկապես անհրաժեշտ է ձեր հոգևոր առաջընթացի համար: Եկել է ժամանակը, երբ մոլորակի մենտալային դաշտը պետք է մաքրվի: Միայն այն ժամանակ, երբ կդատարկեք կաթսան, դուք այն կկարողանաք լցնել նրանով, ինչն անհրաժեշտ է, որ տվյալ պահին նրա մեջ լցվի:

Աստվածամայր

8. Ես առաջարկում եմ լրջորեն վերանայել ձեր աշխարհի ամենաբազմազան տեղեկատվական հոսքերի ազդեցությանը չմտածված ձևով ձեր գիտակցությունը հրամցնելու ձեր վերաբերմունքին: Ձեր աշխարհը պարունակում է տեղեկատվություն, որի 90 տոկոսը ձեզ բոլորովին պետք չէ: Ձերբազատվե՛ք այդ տեղեկատվությունից, և դուք մուտքի իրավունք կստանաք այն տեղեկատվության համար, որը ձեզ անհրաժեշտ է: Նույնը վերաբերում է նաև ձեր զգացմունքներին:

Աստվածամայր

9. Վերլուծե՛ք օրվա ձեր զգացմունքները: Հետևե՛ք ձեր զգացմունքներին օրվա ընթացքում. որքա՞ն հաճախ եք դուք գտնվել սիրո, բերկրանքի, անառիթ ուրախ տրամադրության վիճակում. քանի՞ անգամ եք դուք կանգ առել ճամփի մեջտեղում, որպեսզի հիանաք ծառերով կամ ամպերով. որքա՞ն հաճախ եք դուք ընդհանրապես ելնում բնության գիրկը: Ձեր զգացմունքները ձեր մտքերի պես ենթակա են Երկրի ընդհանուր տեղեկատվական դաշտի ազդեցությանը: Եվ այդ դաշտը խոչընդոտում է ավելի բարձր օկտավաներից ձեր հոծ աշխարհի մեջ ցանկացած պատկերների և պատկերացումների ներթափանցմանը: Մարդկությունը գտնվում է անկատար մտքերի և զգացմունքների ծածկոցի տակ, ուր հենց ինքն է իրեն քշել: Եվ այժմ դուք պետք է սկսեք փոցխել ձեր անկատար մտքերի ու զգացմունքների կույտերը:

Աստվածամայր

10. Ձեր զանգվածային տեղեկատվական միջոցները հարմարվում են մարդկային գիտակցության միջին մակարդակին: Այդ պատճառով նրանք ձեզ խոչընդոտում են անցնելու գիտակցության ավելի բարձր մակարդակին: Հրաժարվեցե՛ք տեղեկատվական սուռոգատները սպառելուց, և մրցակցական պայքարով ղեկավարվող զանգվածային տեղեկատվական միջոցները կսկսեն հարմարվել ձեր գիտակցության մակարդակի հետ: Այս աշխարհն ընդամենը ձեր գիտակցության արտացոլանքն է: Եվ փոխելով ձեր գիտակցությունը՝ դուք ունակ կլինեք դեպի ձեզ քաշելու նուրբ աշխարհի ավելի կատարյալ դրսևորումները: Եվ կիրականանա այն կատարյալ նմուշների

ցանքսը, որոնք ձեզ համար նախապատրաստել են մարդկության ամենաառաջավոր մտածողները և սպասում են, թե երբ վերջապես դուք դրանք կընդունեք ձեր աշխարհ:

Աստվածամայր

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

Հանուն Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու:

Ամեն

Հիսուսի Վարդարանը

Ես դիմում եմ ձեզնից նրանց, ովքեր իմ նկատմամբ հատուկ հարազատություն են զգում

Հայր մեր

Հայր մեր, որ Երկնքում ես,

սուրբ լինի Քո Անունը.

Քո Թագավորությունը գա.

Քո Կամքը լինի Երկրի վրա, ինչպես որ Երկնքում է.

մեր ամենօրյա հացը տուր մեզ այսօր,

և ներիր մեր մեղքերը,

ինչպես որ մենք ենք ներում մեզ պարտք եղողներին.

և մի տանիր մեզ փորձության,

այլ փրկիր մեզ չարից,

քանզի Քոնն է արքայությունը

և զորությունը և փառքը հավիտենական.

Ամեն

Աստվածամայր

Ցնծա՛, Սուրբ Կույսդ Աստվածամայր,

Բարեշնորհ Մարիամ,

Տերը Քեզ հետ է.

օրհնյալ ես Դու կանանց մեջ,

և օրհնյալ է պտուղը որովայնիդ,

քանզի ծնեցիր մեր հոգիների Փրկչին:

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

Հանուն Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու: Ամեն

1. ԵՍ ԵՄ Հիսուս: Դուք տեղյակ եք, որ իմ մարմնավորման ընթացքում շատ մարդիկ էին գալիս տեսնելու այն հրաշքները, որոնք ես գործում էի, բայց ավելի քիչ մարդիկ էին գալիս, որ լսեն իմ ուսմունքները. և միայն իմ ամենամերձավոր 12 աշակերտներն էին, որ ընդունակ էին այս կամ

այն չափով ընկալելու այն գաղտնի գիտելիքները, որոնք ես տալիս էի: Այդ գիտելիքները չափազանց շատ էին տարբերվում այն ժամանակվա կրոնական համոզմունքներից: Բայց ես ուսուցանում էի, որովհետև պարտավոր էի ցանել Ճշմարտության սերմերը՝ թեկուզ և ոչ շատ մեծ քանակությամբ հետևորդների սրտերում:

Աստվածամայր

2. Ես դիմում եմ ձեզնից նրանց, ովքեր հատուկ հարազատություն են զգում իմ նկատմամբ. իմացե'ք, որ ես բաց եմ՝ ձեր սրտերում ինձ հետ կապ ստեղծելու համար: Ես գալիս եմ յուրաքանչյուրի մոտ, ով ինձ հրավիրում է և նախապատրաստել է իր տաճարն՝ ինձ ընդունելու համար:Մի' ահաբեկվեք, և մի' հուսահատվեք, եթե մեր հաղորդակցությունը միանգամից չի կայանում: Ինձ անհրաժեշտ է, որ ձեր թրթիռները հասնեն որոշակի մաքրության աստիճանի, որից հետո ես կկարողանամ ներկա գտնվել ձեր մեջ և հաղորդակցվել ձեզ հետ:

Աստվածամայր

3. Ինձ հետ հաղորդակցվելու ձեր մղումը կստեղծի որոշակի ձգտման մագնիս, և ես հնարավորություն կստանամ ներքին հաղորդակցության համար մուտք գործել ձեր սրտի մեջ: Եթե դուք ուշադրությամբ վերընթերցեք Կտակարանի նույնիսկ այն տարբերակը, որն այժմ մատչելի է կարդալու համար, ապա կտեսնեք, որ ես երբեք արտաքին ծիսակարգը պահպանելու կոչ չեմ արել: Ես կոչ եմ արել ընթանալ Ուղով, որն անցնում է ձեր սրտերի միջով: Ես ուսուցանել եմ ձեզ, որ դուք նախապատրաստեք ձեր տաճարները փեսացուի գալստյան համար: Ձեր փեսան՝ դա ձեր Ես-Քրիստոսն է:

Աստվածամայր,

4. Երբ դուք հասնում եք ձեր ստորին չորս մարմինների, ձեր հոգու որոշակի մաքրության աստիճանի, ապա հնարավորություն եք ստանում հաղորդակցվելու ձեր բարձրագույն Ես-Քրիստոսի հետ՝ ձե'ր իսկ բարձրագույն մասի հետ, որից հետո՝ ձեր Ես-Քրիստոսի միջոցով հնարավորություն եք ստանում հաղորդակցվելու նաև բոլոր Համբարձյալ Դասերի հետ: Իրականում ձեզ պետք չէ ոչ մի արտաքին դեսպանորդ, որպեսզի մեր հաղորդակցությունը կայանա: Ես կտամ ձեզ և' իմ օժանդակությունը, և' իմ հանգիստը, և' իմ մխիթարությունը: Այդ ամենը դուք կստանաք ձեր ներսում՝ ձեր սրտում:

Աստվածամայր

5. Ես կգամ բոլորի մոտ, ով սպասում է ինձ, ով ձանձրացել է առանց ինձ: Ես ձեզ խոստանում եմ, որ կգամ ձեզնից յուրաքանչյուրի մոտ և կտամ հենց այն, ինչին ամենաշատն է ծարավ ձեր սիրտը: Ես ձեզ գիտելիք կտամ ձեր Սկզբնաղբյուրի մասին՝ այն աշխարհի մասին, որտեղից եկել եք և ուր ձգտում եք վերադառնալ: Ես ձեզ կհիշեցնեմ ձեր առաջին սիրո մասին, ես ձեզ գիտելիք կտամ այն Ուղու մասին, որը ձեզ կբերի Տուն՝ ձեր Երկնավոր Հոր մոտ:

Աստվածամայր

6. Մի' հավատացեք նրան, ով ձեզ կասի, թե ահա այս արքայությունն այստեղ է, կամ ահա այդ արքայությունն այնտեղ է: Մի' հավատացեք նրանց, ովքեր կհամոզեն ձեզ կառուցել այդ Արքայությունն արտաքին աշխարհում՝ կոչվի դա Աստծո Երկրային Արքայություն, թե՝ Կոմունիզմ: Ձեզ պետք չէ հասնել աշխարհի ծայրը՝ Հնդկաստան, Ամերիկա կամ Տիբեթ, որ գտնեք այդ Արքայությունը: Աստծո Արքայությունը ձեր գիտակցության վիճակն է: Եվ երբ դուք հասնում եք ձեր գիտակցության զարգացման որոշակի մակարդակին, ապա դուք Աստծո Արքայություն մտնելու թույլտվություն եք ստանում:

Աստվածամայր

7. Բռնեցե'ք իմ ձեռքը: Ամուր պահե'ք այն, և ես ցույց կտամ ձեզ դեպի այդ Արքայությունը տանող ճանապարհը, որը գտնվում է ձեր սրտի ներսում: Միայն թե՝ սկզբում դուք պետք է կամավոր կերպով հրաժեշտ տաք ձեր այն որակներին, որոնք ծանրաբեռնում են ձեր սրտերը և խանգարում ձեզ ճանաչելու ինձ՝ նույնիսկ այն ժամանակ, երբ ես մոտենում եմ ձեզ և կանգնում ուղիղ ձեր աչքերի առաջ: Դուք ինձ չեք տեսնի այնքան ժամանակ, քանի դեռ չեք կարողանա ազատվել ձեր ուսաբեռից: Դա մի բեռ է, որ գոյացել է ձեզ շրջապատող աշխարհի հետ ունեցած ձեր կապվածություններից:

Աստվածամայր

8. Ես ձեզ վարժություն կտամ, և խոստացեք, որ այն ամեն օր կկատարեք: Ամեն օր պատկերացրեք, որ ուղիղ ձեր առջև տեսնում եք կուրացուցիչ փայլատակող Լույս: Ձեր մեջ ցանկություն է առաջանում ձուլվել այդ Լույսի հետ՝ դառնալ նրա հետ մի միասնություն: Բայց այդ Լույսը վառում է ձեզ, և դուք չեք կարողանում մոտենալ նրան: Որովհետև ձեր մեջ կա մի բան, որը Լույսից չէ՝ մի բան, որը խանգարում է ձեզ հասնելու ձեր իսկական բնույթին համապատասխանող վիճակին, այն է՝ Լույս Հուր, Բոց: Մտածե'ք՝ ի՞նչն է ձեզ խանգարում: Ի՞նչն է, որ Լույսից չէ:

Աստվածամայր

9. Պետք չէ փորձել միանգամից ազատվել ձեր բոլոր անկատարություններից: Գտեք ձեր մեջ այն հատկանիշը, որը ձեր կարծիքով ամենաշատն է խանգարում ձեզ,որպեսզի դրսևորեք ձեր իսկական էությունը: Եթե դուք չեք գտնում, թե դա որ հատկանիշն է, ապա մտասևեռվե'ք ինձ վրա, խնդրե'ք ինձ, և ես կհուշեմ ձեզ, թե դա որ հատկանիշն է: Այն բացահայտ կդառնա ձեր կյանքում, և դուք կուզենաք ազատվել դրանից: Դուք պետք է այնքան կրքոտ ցանկանաք ազատվել այդ հատկանիշից կամ վնասակար սովորությունից, որ ինձ ուղղված ձեր յուրաքանչյուր աղոթքում խնդրեք ինձ, որ ազատեմ ձեզ այդ հատկանիշից, որ օգնեմ ձեզ հաղթահարելու ձեր այդ անկատարությունը:

Աստվածամայր

10. Տվե'ք ինձ ձեր բոլոր անկատարությունները: Խնդրե'ք ինձ, և ես կվերցնեմ բոլորը: Եվ ձեր մեջ այլևս չի լինի ոչինչ, որ խանգարի տեսնել ինձ, երբ ես կանգնած եմ ձեր առաջ: Ինձ միայն կմնա բռնել ձեր ձեռքը և ձեզ տանել դեպի Աստծո Արքայության այն գաղտնի մուտքը, որը թաքցված է ձեր սրտի գաղտնի մենաստանում: Իսկ մինչ այդ՝ մենք դեռ կհանդիպենք: Ես ձեզ մոտ կգամ նորից ու նորից՝ այնքան ժամանակ, քանի դեռ ունակ չեք լինի լսելու ինձ և զգալու իմ Սերը:

ԵՍ ԵՄ Հիսուս՝ ձեր ընկերն ու եղբայրը ձեր Ճանանպարհին:

Աստվածամայր

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

Հանուն Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու:

Ամեն

Սուրբ Միքայել Հրեշտակապետի համառոտ

Վարդարանը՝

ըստ 2009 թ-ի հունիսի 22-ի Ուղերձի

Ես կանչում եմ ձեզ դեպի ապաշխարություն

Հանուն Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու, Ամեն

Հայր մեր

Հայր մեր, որ Երկնքում ես,

սուրբ լինի Քո Անունը.

Քո Թագավորությունը գա.

Քո Կամքը լինի Երկրի վրա, ինչպես որ Երկնքում է.

մեր ամենօրյա հացը տուր մեզ այսօր,

և ներիր մեր մեղքերը,

ինչպես որ մենք ենք ներում մեզ պարտք եղողներին.

և մի տանիր մեզ փորձության,

այլ փրկիր մեզ չարից,

քանզի Քոնն է արքայությունը

և զորությունը և փառքը հավիտենական.

Ամեն

Աստվածամայր

Ցնծա՛, Սուրբ Կույսդ Աստվածամայր,

Բարեշնորհ Մարիամ,

Տերը Քեզ հետ է.

օրհնյալ ես Դու կանանց մեջ,

և օրհնյալ է պտուղը որովայնիդ,

քանզի ծնեցիր մեր հոգիների Փրկչին:

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

1. ԵՍ ԵՄ Միքայել Հրեշտակապետը: Ես եկել եմ կապույտ բոցի հրեշտակներով շրջապատված: Եվ կուզենայի, որ ձեր ողջ ուշադրությունը կենտրոնացնեիք իմ հաղորդման վրա: Այս և մոտակա օրերին այնպիսի ժամանակներ են, երբ դուք ձեր ջանքերը պետք է կենտրոնացնեք մոլորակին օգնելու գործի վրա: Եվ հենց դա է իմ հաղորդումն ու նախազգուշացումն ուղղված ձեզ: Ես մանրազնին կերպով խոսքեր եմ ընտրել և մտորել, թե ինչպե՞ս ձեզ հասցնեմ այն պարզ ճշմարտությունը, որ արդեն հասել եք այն տարիքին, երբ Համբարձյալ Դասերի հետ պետք է կիսեք պատասխանատվությունն այն ամենի համար, ինչ տեղի է ունենում մոլորակի վրա: Դուք չեք շտապում մոլորակի համար պատասխանատվություն ստանձնել, սակայն դա ձեզ կվիճակվի անել: Եվ դա գիտակցության այն հաջորդ մակարդակն է, որին պետք է հասնեք:

Աստվածամայր

2. Առաջվա պես ձեզ հուզում է միայն այն, ինչ տեղի է ունենում ձեր շուրջը. դուք կլանված եք այն պատրանքով, որը ձեզ շրջապատում է տանը, աշխատանքի վայրում, ցուցադրվում է հեռուստատեսությամբ: Սակայն կան անհամեմատ ավելի կարևոր և իրական բաներ, որոնց մասին արդեն պետք է սկսեք մտորել: Ամբողջ աշխարհը, լինելիության ֆիզիկական և նուրբ ոլորտները ցնցվում են ձեր շատ գործողություններից, մտքերից ու զգացմունքներից: Ե՛վ ես, և՛ Լույսի մյուս էակները երբեմն սարսուռով ենք ընկալում բացասական էներգիայի այն հերթական բռնկումները, որոնք մարդիկ թույլ են տալիս իրենց անմտության երեսից: Ամեն անգամ, երբ տեղի է ունենում բացասական էներգիայի անկառավարելի ժայթքում, պահանջվում է բազում Լույսի էակների ջանքերի ներդրումը, որպեսզի իրավիճակը համակշռվի և հետևանքները ֆիզիկական ոլորտի համար աղետալի չդառնան:

Աստվածամայր

3. Այժմ հասել է այն ժամանակը, երբ դուք՝ մարդկային համակեցության լավագույն ներկայացուցիչներդ, պետք է մեզ՝ Համբարձյալ Դասերիս հետ կիսեք պատասխանատվությունը Երկիր մոլորակի համար՝ այն ամենի համար, ինչ տեղի է ունենում մոլորակի վրա: Եվ դա գիտակցության այն մակարդակն է, որին մոտակա ժամանակներում իրապես պետք է հասնեք:

Աստվածամայր

4. Դադարե՛ք հայացք նետել շրջապատի մարդկանց վրա և հետևել այն օրինակներին, որոնք տեսնում եք ձեր շուրջն ու հեռատեսիլի էկրանին: Քանզի մոտ է այն ժամանակը, երբ պետք է սկսեք հետևել ձեր սրտերի առաջնորդությանը: Կան ավելի նուրբ էներգիաներ ու գործընթացներ, որոնք ավելի նուրբ ոլորտներում առկա են ձեր շուրջը: Եվ այդ գործընթացներն իրենց արձագանքն են գտնում ձեր ներսում գիտակացական որոշակի վիճակների տեսքով:

Աստվածամայր

5. Նուրբ ոլորտում տեղի ունեցողը ոչ միշտ է ձեր կողմից գիտակցվում, ոչ ամեն ինչն է հասնում ձեր արտաքին գիտակցությանը, բայց դուք օժտված եք որոշակի ներըմբռնողականությամբ, կանխազգացությամբ, հոգեպայծառացմամբ: Եվ եթե անկեղծ լինեք ինքներդ ձեզ հետ, եթե մուտք գործեք ձեր սիրտը և զգաք նուրբ աշխարհի թրթիռները, ապա պարզորոշ կերպով տագնապալից զվվոց կլսեք, որը ելնում է Երկիր մոլորակից: Դա տագնապի ազդանշան է: Այն ցույց է տալիս, որ մոլորակի վրա գործերը վատ են ընթանում:

Աստվածամայր

6. Ինչպե՞ս կարելի է փոխել իրավիճակը, և ի՞նչ կարելի է անել հենց հիմա, որպեսզի ուժերի գերակշռումով նորից լուսավոր ուղու հեռանկար բացվի: Ես կարծում եմ, որ ավելորդ չի լինի հիշեցնել այն մասին, որ որքան էլ ծանր լինի իրավիճակը, որքան էլ ձեզ տիրեն ծանր մտքերն ու տրամադրությունները, պետք է ձեր մեջ ուժ գտնեք և արտաբերեք հետևյալը.

«Ես գիտեմ, որ այս վիճակներն իրական չեն: Գիտեմ, որ պատրանքն ուժեղ է, բայց ես պատրաստ եմ պատրանքային ուժերին հակադրելու իմ Միրո ողջ զորությունը, որն իմ սրտից է բխում: Ես սիրում եմ այս աշխարհը: Ես սիրում եմ Աստծուն և Նրա արարչագործությունը և թույլ չեմ տա, որ այն ավերվի: Պաշտելի՛ Միքայել Հրեշտակապետ և պահապան հրեշտակնե՛ր, խնդրում եմ իմ կենսահոսքն օգտագործել՝ ի օժանդակություն Լույսի զորագնդերի: Ես գիտեմ, որ իմ մոլորակի հետ ոչինչ չի պատահի, քանի դեռ կա գոնե մեկ լուսակիր, ով գիտակցորեն գործում է Լույսի ուժերի կողմից»:

Աստվածամայր

7. Հենց որ հավաքագրենք բավարար թվով անհատների, որոնք պատրաստ կլինեն վճռականորեն պաշտպանելու Լույսի դիրքերը, մենք կկարողանանք ողորմածություն խնդրել Մեծ Կենտրոնական Արևից ու բոլոր տիեզերական խորհուրդներից, որպեսզի Երկիրն օգնություն ստանա և այդ օգնությունը ստանա առանց հապաղման:

Աստվածամայր

8. Այդ պահով շատ բան է որոշվում: Մարդկային անհատների մեծ մասը պատրաստ չէ գիտակցության փոփոխությանը: Եվ գործունյա կամավորներ են պետք, որպեսզի ցուցադրվի գիտակցության նոր մակարդակը, այն գիտակցության, որը ոչ թե կապկպված է ֆիզիկական ու աստեղային ոլորտներին, այլ պատրաստ է համագործակցելու Բարձրագույն Աշխարհների հետ: Եվ այնժամ, երբ բավարար թվով անհատներ գտնվեն, որոնք ի վիճակի կլինեն ցուցաբերելու իրենց նոր գիտակցությունը, նրանց ջանքերի շնորհիվ կսկսի փոխվել նաև մյուս մարդկանց գիտակցությունը:

Աստվածամայր

9. Լինելիության նուրբ ոլորտներում դուք բոլորդ կապված եք իրար հետ: Եվ գիտակցության ավելի բարձր հաճախություն է պետք, որ կամերտոնի պես հնչի տարածության մեջ, որպեսզի այն մարդկանց հոգիները, որոնք խրված են պատրանքի մեջ, ոգի առնեն ու իրենց հայացքներն ուղղեն դեպի Երկինք: Ես նախանձում եմ ձեզ, որ մարմնավորվել եք այս բարդ ժամանակներում: Քանզի այն բանից, թե ինչպես կկարողանաք մաքուր պահել ձեր գիտակցությունը և այն համահունչ ու նկրտուն դարձնել Բարձրագույն Աշխարհների հետ, կախված է մոլորակի և այն հոգիների ապագան, որոնք թաղված են պատրանքի մեջ և ոչ մի լույսի շող չեն տեսնում:

Աստվածամայր

10. Օրինա՛կ ցույց տվեք: Խիզա՛խ եղեք ու տոկուն, եղե՛ք ճարտարամիտ: Հորինե՛ք այն եղանակները, որոնք միլիոնավոր մարդկանց գիտակցությունը կբարձրացնեն նոր մակարդակի վրա: Ողողանջե՛ք ամենաբարձր նոտայով: Օրինա՛կ ծառայեք: Ես ձեզ կանչում եմ դեպի ապագան... ԵՍ ԵՄ Միքայել Հրեշտակապետը...

Աստվածամայր

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

Հանուն Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու:

Ամեն

Տեր Սուրիայի փոքր Վարդարանը

Պարզաբանումներ մոլորակի իրավիճակի վերաբերյալ

Հանուն ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ, սու՛րբ Աստվածամայր, պաշտելի՛ Մայր Մարիամ, ծնկաչոք իջնում եմ քո առաջ:

Բառեր չեմ գտնում, որ արտահայտեմ իմ սրտի ողջ Սերը, որ տածում եմ առ քեզ:

Ընդունի՛ր իմ Սերն ու երախտագիտությունը: Քեզ հայտնի է, թե ինչն է ամենակարևորն այս պահին իմ հոգու աճի համար:

Ես խնդրում եմ քո օգնությունն ու օժանդակությունը:

Խնդրու՛մ եմ, օգնիր, որ օրվա ունայնության մեջ չմոռանամ մեր անմիջական հաղորդակցության այն խաղաղ րոպեները, որոնց մասին հիշում է իմ հոգին:

Թող քեզ հետ ունեցած իմ անխզելի կապը նեցուկ լինի ինձ կյանքում և օգնի, որ չմոռանամ այն Բարձրագույն Ուղու մասին, որով մտադիր եմ քայլել իմ կյանքում: Ամեն

Հանուն Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու: Ամեն

1. Մոլորակի վրա շատ բան է փոխվել, և ես պետք է հաճույքով հաստատեմ այն փաստը, որ անխուսափելի փոփոխություններ են տեղի ունեցել դեպի լավը: Ձեզնից շատերի համար իմ խոսքերն առնվազն տարօրինակ կթվան, քանի որ չեք զգում, որ ձեր շրջապատում տիրող վիճակը թեթևացել է: Ընդհակառակը՝ ձեզ թվում է, թե աղջամուղջն ավելի է թանձրանում, և իրավիճակն ավելի է բարդանում: Ձեզ թվում է, թե վիճակն անելանելի է, և տարակուսում եք, թե Համբարձյալ Դասերն ինչու՞ են ցնծում...

Ցնծա՛, Սուրբ Կույսդ Աստվածամայր,

Բարեշնորհ Մարիամ,

Տերը Քեզ հետ է.

օրհնյալ ես Դու կանանց մեջ,

և օրհնյալ է պտուղը որովայնիդ,

քանզի ծնեցիր մեր հոգիների Փրկչին:

2. Ես պետք է ձեզ հայտնեմ, որ իրավիճակի ձեր և մեր ըմբռնումներն իրարից տարբերվում են: Դուք աշխարհն ընկալում եք՝ հիմնվելով ձեր կենսափորձի և իրականության ընկալման ձեր զգայարանների վրա: Ուստիև ձեզ թվում է, թե իրավիճակը լարվում է և վատթարանում: Իսկ մեր տեսակետից ընդհակառակն է՝ ամեն ինչ դեպի լավն է գնում: Հարցն այստեղ թրթռանքների տարբերության մեջ է:

Ցնծա՛, Սուրբ Կույսդ Աստվածամայր,

Բարեշնորհ Մարիամ,

Տերը Քեզ հետ է.

օրհնյալ ես Դու կանանց մեջ,

և օրհնյալ է պտուղը որովայնիդ,

քանզի ծնեցիր մեր հոգիների Փրկչին:

3. Երբ ֆիզիկական ոլորտի թրթռանքը բարձրանում է, դուք դա կարող եք ընկալել որպես վատացում, զգալ ֆիզիկական զանազան տկարություններ և ձեր գիտակցության համար ծանր վիճակներ, որոնք ձեզ պարուրում են բացասական մտքերով ու հույզերով: Պաշտելինե՛րս, դա բնական երևույթ է: Միշտ էլ, երբ մարդկությունն անցում է կատարել գիտակցության մի մակարդակից մյուսին, սկզբում թվացել է, թե շրջապատում ամեն ինչ վատթարանում է: Որովհետև ձեր թրթիռները չեն համապատասխանում այն մակարդակին, որին տվյալ պահին անցնում է մոլորակը: Հենց այդ պատճառով էլ դուք ձեզ վատ եք զգում: Միևնույն ժամանակ, ինչպես մենք ենք կարծում, մեզ հաջողվել է հասնել անդառնալի փոփոխությունների և ապահովել Երկիր մոլորակի թրթռանքի ֆոնի բարձրացման կայուն տեմպը:

Ցնծա՛, Սուրբ Կույսդ Աստվածամայր,

Բարեշնորհ Մարիամ,

Տերը Քեզ հետ է.

օրհնյալ ես Դու կանանց մեջ,

և օրհնյալ է պտուղը որովայնիդ,

քանզի ծնեցիր մեր հոգիների Փրկչին:

4. Այժմ միայն ժամանակի հարց է, թե որքան արագ մարդկությունը կկարողանա ձերբազատվել իր հնամենի վերքերից և վարքի կարծրատիպերից: Այն անհատների համար, որոնք ներքուստ կողմնորոշված են դեպի Բարձրագույն իրականությունը, որոնք իրենց ողջ էությամբ ընդունեցին մեր Ուսմունքը և սրտի թրթիռով սպասում էին մեր աշխարհից առաքված յուրաքանչյուր նոր Ուղերձին՝ շրջապատող աշխարհի ճնշող իրավիճակը շատ շուտով կփոխարինվի թեթևության զգացումով ու վերելքով: Նրանք իրենց զգայուն բնույթով ուղղակի որսում են շրջապատող տարածության թրթիռները, և սեփական թրթիռներին դրանց անհամապատասխանությունը ստիպում է նրանց զգալու զանազան տկարություններ և հոգևոր թախիծ: Դա ավելի շուտ կարեկցանք է աշխարհի նկատմամբ և համաշխարհային կարմայի մի մասի բեռնում սեփական ուսերին, քան զուտ գիտակցության բացասական վիճակի արտահայտություն:

Ցնծա՛, Սուրբ Կույսդ Աստվածամայր,

Բարեշնորհ Մարիամ,

Տերը Քեզ հետ է.

օրհնյալ ես Դու կանանց մեջ,

և օրհնյալ է պտուղը որովայնիդ,

քանզի ծնեցիր մեր հոգիների Փրկչին:

5. Մյուս անհատները, որոնք, ցավոք, Երկրի մարդկության մեծամասնությունն են, առաջվա պես հակված են դեպի հին արժեքները, և նրանց գիտակցությունը դեռևս պատրաստ չէ Աստծուն ընդունելուն: Նրանք փորձված հնարքներով փորձում են կրկին իջեցնել իրենց թրթիռները և հայտնվել իրենց համար բնական թրթռանքի մակարդակում: Բայց դա այլևս հնարավոր չէ, քանի որ մոլորակի թրթռանքի ֆոնն արդեն վեր է բարձրացել: Դուք չեք կարող առանձնանալ այն նավից, որի վրա գտնվում եք: Դուք դեպի ապագա եք ընթանում մի նավով, որը կոչվում է Երկիր մոլորակ: Եվ որքան էլ ձեզ վրդովի այն ուղղությունը, որով ընթանում է ձեր մոլորակը, ստիպված կլինեք հաշտվելու դրա հետ: Քանզի մարդկության համար այդ ուղղությունը կանխորոշված է համայն Տիեզերքի Արարչի կամքով: Իսկ եթե չեք ցանկանում հետևել այդ ուղղությանը, ապա ձեզ միայն մի ելք է մնում՝ դուրս ցատկել տախտակամածից և հայտնվել մարդկության պատմությունից դուրս, լրացնելով անցյալի ձախողված քաղաքակրթությունների աղբակույտը:

Ցնծա՛, Սուրբ Կույսդ Աստվածամայր,

Բարեշնորհ Մարիամ,

Տերը Քեզ հետ է.

օրհնյալ ես Դու կանանց մեջ,

և օրհնյալ է պտուղը որովայնիդ,

քանզի ծնեցիր մեր հոգիների Փրկչին:

6. Իհարկե, տիեզերական հնարավորություն որոշ ժամանակով դեռևս կհատկացվի յուրաքանչյուրին: Տիեզերական էակները շատ զգուշորեն դեռ կաշխատեն ձեր հոգիների հետ՝ ձեզ տալով բոլոր անհրաժեշտ խրատները և ուսուցումը: Սակայն եթե ձեզնից որոշներն այնուամենայնիվ գերադասեն ընթանալ իրենց ընտրած ուղղությամբ, ապա որոշ ժամանակ հետո մենք նրանց հանգիստ կթողնենք և թույլ կտանք, որ Կարմայի օրենքն ավարտի իր աշխատանքը՝ ապահովելով տիեզերական օրինականությունը:

Ցնծա՛, Սուրբ Կույսդ Աստվածամայր,

Բարեշնորհ Մարիամ,

Տերը Քեզ հետ է.

օրհնյալ ես Դու կանանց մեջ,

և օրհնյալ է պտուղը որովայնիդ,

քանզի ծնեցիր մեր հոգիների Փրկչին:

7. Տիեզերական բարեգթությունն անվերջ մեծ է, բայց անսահման չէ: Մենք նույնիսկ անհնարինը կարող ենք անել ձեր հոգիների համար, բայց միայն այն դեպքում, եթե հանձն առնեք ենթարկվել համայն այս Տիեզերքի Օրենքին: Իսկ եթե համառորեն շարունակում եք ընթանալ ձեր ընտրած ուղղությամբ, ապա ստիպված կլինեք հրաժեշտ տալու մեզնից օգնություն և օժանդակություն ստանալու հույսին: Տիեզերական էներգիայի ոչ մի էրգ մենք այլևս չենք ծախսի, որպեսզի պահպանենք այն, ինչը կամավորապես ենթարկվել է մահվան ու դժոխքի ուժերին:

Ցնծա՛, Սուրբ Կույսդ Աստվածամայր,

Բարեշնորհ Մարիամ,

Տերը Քեզ հետ է.

օրհնյալ ես Դու կանանց մեջ,

և օրհնյալ է պտուղը որովայնիդ,

քանզի ծնեցիր մեր հոգիների Փրկչին:

8. Հենց այդ է պատճառը, որ մոլորակն այժմ այսքան անհրապույր ու անհարմարավետ է երևում: Քանզի անցումային ժամանակներում, երբ Լույսին առավել շատ է խավար խառնվում, ապրելը շատ է դժվարանում: Ուստիև մենք գալիս ու պարզաբանումներ ենք տալիս մոլորակի իրավիճակի վերաբերյալ: Եթե ձեզ հայտնի է, թե ինչ է կատարվում, ապա կկարողանաք գործել ավելի մեծ հստակությամբ և ըմբռնումով: Մենք ձեզ գիտելիք ենք տալիս անցումային գործընթացների վերաբերյալ: Այդ գիտելիքներն ու մեր օգնության ձեռքը, որը ձեզ ենք մեկնում աշխարհների միջով, անգնահատելի օգնություն կլինեն այն մարդկանց հոգիների համար, ովքեր համահունչ են էվոլյուցիային:

Ցնծա՛, Սուրբ Կույսդ Աստվածամայր,

Բարեշնորհ Մարիամ,

Տերը Քեզ հետ է.

օրհնյալ ես Դու կանանց մեջ,

և օրհնյալ է պտուղը որովայնիդ,

քանզի ծնեցիր մեր հոգիների Փրկչին:

9. Իսկ եթե հետ եք քաշում ձեր ձեռքը՝ չցանկանալով բռնել մեր օգնության ձեռքը, ապա մենք կրկին ու կրկին կփորձենք գալ և տալ մեր Ուսմունքը, քանի դեռ Աստվածային հնարավորությունը փակված չի լինի: Թե երբ դա տեղի կունենա՝ ես ձեզ չեմ ասի: Բայց դուք մշտապես պետք է գիտակցեք, որ Աստվածային հնարավորությունը կարող է ընդհատվել ցանկացած պահի, և օգտագործեք Երկրում լինելու ձեր ամեն մի ակնթարթը՝ ի բարօրություն ձեր հոգու:

Ցնծա՛, Սուրբ Կույսդ Աստվածամայր,

Բարեշնորհ Մարիամ,

Տերը Քեզ հետ է.

օրհնյալ ես Դու կանանց մեջ,

և օրհնյալ է պտուղը որովայնիդ,

քանզի ծնեցիր մեր հոգիների Փրկչին:

10. Ես մեծ հույսեր ունեմ, որ այսօրվա իմ Ուղերձը ճշմարիտ ուղենիշ կծառայի ձեզ համար՝ Երկիր մոլորակի շարունակաբար փոթորկվող կյանքի ծովում: Եվ մենք միասին կկարողանանք հաղթահարել այս անցումային ժամանակը և հասնել այն ուրախ ժամանակներին, երբ խաղաղված կլինեն բոլոր փոթորիկներն ու մրրիկները և արևի քնքուշ ճառագայթները շողալիս կլինեն ամպերի տակից... Կկամենայի, որ մշտապես ձեր ներսում պահպանեք միայն դրական տրամադրվածություն: Ձեր աշխարհում տեղի ունեցող ոչ մի բանի թույլ մի՛ տվեք, որ ձեզ հանի հավասարակշռության և ներքին անդորրության վիճակից: Այդ եղանակով դուք ոչ միայն ձեր հոգուն անգնահատելի օգնություն ցույց կտաք, այլ նաև Երկիր մոլորակի շատ ու շատ կենսահոսքերի: ԵՍ ԵՄ Սուրիան:

Ցնծա՛, Սուրբ Կույսդ Աստվածամայր,

Բարեշնորհ Մարիամ,

Տերը Քեզ հետ է.

օրհնյալ ես Դու կանանց մեջ,

և օրհնյալ է պտուղը որովայնիդ,

քանզի ծնեցիր մեր հոգիների Փրկչին:

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

Հանուն Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու:

Ամեն

Սերապիս Բեյի համառոտ

Վարդարան-1

Ձեր խնդիրն է՝ սովորել հաղթանակել նուրբ ոլորտում

(համառոտ Վարդարան՝ Սերապիս Բեյի 2009 թ-ի հունիսի 23-ի թելադրության հիման վրա)

Հանուն Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու:

Ամեն

Հավատո Հանգանակ

Հավատում եմ Միասնական Աստծուն՝

Երկնքի ու Երկրի Արարչին,

որ ներկա է համայն Կյանքում:

Հավատում եմ Նրա Օրենքի արդարությանը,

և հնազանդորեն ենթարկվում եմ

Նրա Օրենքի Իմաստությանը:

Հավատում եմ Երկնքի Արքայությանը՝

ինչպես Երկրի վրա, այնպես էլ Երկնքում:

Հավատում եմ Աստծո Միասնությանը՝

Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու:

Ամեն

Հայր մեր

Հայր մեր, որ Երկնքում ես,

սուրբ լինի Քո Անունը.

քո Թագավորությունը գա.

Քո Կամքը լինի Երկրի վրա, ինչպես որ Երկնքում է.

մեր ամենօրյա հացը տուր մեզ այսօր,

և ներիր մեր մեղքերը,

ինչպես որ մենք ենք ներում մեզ պարտք եղողներին.

և մի տանիր մեզ փորձության,

այլ փրկիր մեզ չարից,

քանզի Քոնն է արքայությունը

և զորությունը և փառքը հավիտենական.

Ամեն

Աստվածամայր

Ցնծա՛, Սուրբ Կույսդ Աստվածամայր,

Բարեշնորհ Մարիամ,

Տերը Քեզ հետ է.

օրհնյալ ես Դու կանանց մեջ,

և օրհնյալ է պտուղը որովայնիդ,

քանզի ծնեցիր մեր հոգիների Փրկչին:

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

1. ԵՍ ԵՄ Սերապիս Բեյը: Այս օրով ես եմ եկել... Օրեցօր ավելի դժվար է դառնում ձեր սրտերի դուռը բախելը: Մարդկությունն անշեղորեն շարժվում է դեպի անդունդ: Այնուամենայնիվ մենք մեր հույսը չենք կորցնում: Քանզի հատկապես այնժամ, երբ թվում է, թե վիճակն անելանելի է, և ոչ մի ելք չկա ստեղծված իրավիճակից դուրս գալու համար, հենց այդ պահին տեղի է ունենում մի բան, որը կարելի է Աստծո հրաշք կոչել, և իրադրությունը կտրուկ փոխվում է:

Աստվածամայր

2. Մարդկության պատմության մեջ որքա՜ն հաճախ են եղել պահեր, երբ թվացել է, թե առջևում միայն անթափանց խավար է տիրում: Սակայն ամենավերջին պահին՝ բառացիորեն կործանման եզրին, գտնվել են անձնազոհ հոգիներ, որոնք իրենց վրա են վերցրել մարդկության համար պատասխանատվությունը՝ հանուն երկրային էվոլյուցիայի հետագա ընթացքի:

Աստվածամայր

3. Ես գիտեմ, որ իմ այս ուղերձը կարդացողների մեջ շատ կան լուսավոր հոգիներ: Դուք բազմաթիվ անգամ մարմնավորվել եք Երկրի պատմության ամենաճակատագրական պահերին: Եվ հիմա կրկին ձեզնից պահանջվում է ձեր բոլոր ուժերի ու հնարավորությունների լարումը: Բավական է միայն, որ ոգի առնեք և ձեր հայացքը հառեք ձեզ շրջապատող պատրանքից ավելի վեր:

Աստվածամայր

4. Մի պահ պատկերացրեք, թե վատ երազ եք տեսնում: Գիշերը կանցնի, արևը նորից կշողա, և ցերեկվա լույսի տակ ձեր բոլոր գիշերային ահերն ու սարսափները կթվան անիրական: Դուք այժմ քնի մեջ եք: Դուք խորասուզված եք պատրանքի քնի մեջ: Այժմ հասել է այն ժամանակը, երբ պետք է ի մի բերեք ձեր բոլոր ուժերն ու ունակությունները և քայլ անեք դեպի առաջ: Դուք ասպետներ եք: Մարտիկներ: Եվ այժմ ձեր ջանքերից շատ բան է կախված: Միայն թե հարկ չկա, որ սուր վերցնեք և զրահ հագնեք ֆիզիկական ոլորտում: Դուք պետք է զրահավորվեք ձեր ոգու զրահով: Եվ պետք է վեր հանեք ձեր ոգու սուրը՝ ձեր Կունդալինին: Միայն դրանո՛վ դուք կարող եք ձեր ներսում և ձեզ շրջապատող իրականության մեջ իրականը բաժանել անիրականից:

Աստվածամայր

5. Դուք մարտիկներ եք, բայց ձեր խնդիրն այն չէ, որ անվերջանալի ճակատամարտ մղեք ֆիզիկական ոլորտում: Ձեր խնդիրն է, որ սովորեք հաղթանակ տանել նուրբ ոլորտում, ձեր

հույզերի ու մտքերի ոլորտում: Հատկապես այնժամ, երբ հաղթանակ կտանեք ձեր մտքերի զգացմունքների ու բացասական վիճակների նկատմամբ, հաղթանակ կտանեք նաև լինելիության ֆիզիկական ոլորտում: Քանզի նուրբ ոլորտների ձեր նվաճումներն անխուսափելիորեն կձևափոխեն ֆիզիկական ոլորտը:

Աստվածամայր

6. Հարկ չկա, որ մարտիկների շարքեր փնտրեք, որպեսզի միանաք նրանց: Քանզի նուրբ ոլորտում դուք ներկայանում եք որպես Լույսի հզոր զորք: Եվ դուք անպարտելի ու անխոցելի կլինեք, քանի դեռ ձեր գիտակցությունը պահպանում եք աստվածային մակարդակի վրա: Այն ամենը, ինչ ձեզնից պահանջվում է, իրական աստվածային գիտակցություն կրելը և չկորցնելը գիտակցության այդ մակարդակը ողջ օրվա ընթացքում և ամեն օր:

Աստվածամայր

7. Պատկերացրեք այնպես, որ ֆիզիկական ոլորտում դուք հանդես եք գալիս որպես ընդօրինակման կատարյալ նմուշ: Աննկարագրելի ջանքերի գնով և ներքին աշխատանքով դուք պահպանում եք ձեր գիտակցությունը հնարավորինս բարձր մակարդակի վրա: Իսկ դա անելը բավականին դժվար է՝ գտնվելով անկատար միջավայրում: Բայց այն դեպքում, երբ ձեզ հաջողվում է պահպանել գիտակցության առավելագույն մակարդակը, ձեր թրթիռներն այնքան են բարձրանում, որ ամեն մի անկատարություն, որին բախվում եք ձեր աշխարհում, ստիպված է լինում ցույց տալ իր դեմքը:

Աստվածամայր

8. Դուք մեր մարտիկներն եք և նմանվում եք ջահերի, որոնցով մեզ համար լուսավորվում է պատրանքի անկատարությունը: Աստծո ողջ ուզածն այն է, որ ձեր աշխարհում հնարավորինս արագ տեղի ունենա որոմը հատիկից ջոկելու գործընթացը: Հատկապես այնժամ, երբ կհավաքվի բարի հատիկների բերքը, իսկ մոլախոտերը կհանձնվեն կրակին, ձեր աշխարհի համար կգա այն ժամանակը, երբ Համբարձյալ Վեհապետները կկարողանան մուտք գործել ձեր աշխարհ: Ուստի մի՛ հուսահատվեք և մի՛ ասեք, թե ամեն ինչ վատ է: Ամեն ինչ ճշգրտորեն ընթանում է համաձայն Աստծո պլանի: Եվ ձեզնից ամեն ոք, ով հանձն կառնի իր վրա կրել Լույսի բեռը, կստանա հրեշտակային զորախմբերի պաշտպանությունը:

Աստվածամայր

9. Դուք սարսափով եք նայում ձեր շրջապատին, և դրությունը ձեզ թվում է անելանելի: Մի՛ տրտմեք այն ամենի համար, ինչն այլևս ենթակա չէ հետագա էվոլյուցիայի: Ձեր ոտքերով ամուր կանգնեք հողին և հղե՛ք ձեր կոչերը դեպի Երկինք: Այս բարդ ժամանակներում ձեր դերն ու առաքելությունն այն է, որ դիմանաք ճակատամարտի լարվածությանը և մնաք մարտադաշտում: Միայն թե մարտն ընթանում է նուրբ ոլորտում՝ աստեղային այն թանձրացած շերտերում, որոնք առավելագույնս մոտ են ֆիզիկական ոլորտին: Այդ պատճառով ճակատամարտը զգալի է ձեզ

համար: Դուք պառկում եք քնելու և արթնանում այն զգացողությամբ, որ ողջ գիշեր եղել եք ծանր մարտի մեջ: Եվ հենց այդպես էլ կա: Լույսի լավագույն մարտիկները դադար չունեն ո՛չ ցերեկը, ո՛չ էլ գիշերը: Քանզի չի կարելի կորցնել թանկարժեք ժամանակը, որովհետև ժամանակ շատ քիչ է մնացել: Փոխարենը հետագայում դուք կհիշեք ձեր սխրանքների մասին:

Աստվածամայր

10. Անմոռանալի ժամանակներ են ձեր ապրած ժամանակները: Եվ, որքան էլ ձեզ համար դժվար լինի, պետք է գիտակցեք, որ անհրաժեշտ է դիմանալ ու մնալ շարքերում: Վհատվել չի՛ կարելի: Սիրե՛ք լարվածությունն ու մարտը... Ասված է, որ միայն ամենա-ամենաներն ու նվիրվածները կկարողանան շարունակել էվոլյուցիան: Ես ուրախ եղա ձեզ այսօրվա իմ խրատները տալուս առիթով... **ԵՍ ԵՄ Սերապիս Բեյը:**

Աստվածամայր

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս

Ամեն

Սերապիս Բեյի համառոտ

Վարդարան-2

Ուսմունք սեռական էներգիան ճիշտ ծախսելու մասին

(համառոտ Վարդարան՝ Սերապիս Բեյի 2009 թ-ի դեկտեմբերի 15-ի թելադրության հիման վրա)

Հանուն Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու:

Ամեն

Հավատո Հանգանակ

Հավատում եմ Միասնական Աստծուն՝

Երկնքի ու Երկրի Արարչին,

որ ներկա է համայն Կյանքում:

Հավատում եմ Նրա Օրենքի արդարությանը,

և հնազանդորեն ենթարկվում եմ

Նրա Օրենքի Իմաստությանը:

Հավատում եմ Երկնքի Արքայությանը՝

ինչպես Երկրի վրա, այնպես էլ Երկնքում:

Հավատում եմ Աստծո Միասնությանը՝

Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու:

Ամեն

Հայր մեր

Հայր մեր, որ Երկնքում ես,

սուրբ լինի Քո Անունը.

քո Թագավորությունը գա.

Քո Կամքը լինի Երկրի վրա, ինչպես որ Երկնքում է.

մեր ամենօրյա հացը տուր մեզ այսօր,

և ներիր մեր մեղքերը,

ինչպես որ մենք ենք ներում մեզ պարտք եղողներին.

և մի տանիր մեզ փորձության,

այլ փրկիր մեզ չարից,

քանզի Քոնն է արքայությունը

և զորությունը և փառքը հավիտենական.

Ամեն

Աստվածամայր

Ցնծա՛, Սուրբ Կույսդ Աստվածամայր,

Բարեշնորհ Մարիամ,

Տերը Քեզ հետ է.

օրհնյալ ես Դու կանանց մեջ,

և օրհնյալ է պտուղը որովայնիդ,

քանզի ծնեցիր մեր հոգիների Փրկչին:

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

1. ԵՍ ԵՄ Սերապիս Բեյը: Դուք ճանաչում եք ինձ. ես հաճախ եմ գալիս այս դեսպանորդի միջոցով: Հավանաբար նաև գիտեք, որ ես սպասավորում եմ ամենացածր չակրայի՝ մուլադհարայի, ճառագայթով: Այդ չակրայում ննջում է ձեր Կունդալինիի էներգիան: Դեպի Լույս ձեր համբարձման պահին կուրացուցիչ ճերմակ լույս է ճառագում այդ չակրայից, և Աստծո էներգիան բառացիորեն ձեզ պոկում է ֆիզիկական ոլորտից և վեր հանում դեպի ավելի բարձր օկտավաներ: Ուստի ես այն Վեհապետն եմ, որն աշակերտներին ճիշտ վերաբերմունք է ուսուցանում Աստվածամոր էներգիայի նկատմամբ:

Աստվածամայր

2. Ես տեղյակ եմ, որ վերջին հարյուր և ավելի տարիների ընթացքում մարդկությունը բարոյապես խիստ անկում է ապրել: Այդ անկումն արտահայտվում է նաև սեռական էներգիայի նկատմամբ վերաբերմունքով: Այսօր պետք է մի Ուսմունք տամ, որը շատ շատերին կստիպի այլ կերպ նայել իրենց սեռական մղումներին: Եվ իմ այս խրատատվության նպատակն այն կլինի, որ ինձ լսելու ունակ հոգիներին հետ պահեմ է՛լ ավելի մեծ անկումից և սեռական էներգիայի չարաշահումից:

Ի՞նչ նոր խոսք ու խրատ կարող եմ հաղորդել ձեզ, որ հայտնի եղած չլինի մարդկությանը դեռևս բազմաթիվ հարյուրամյակներ և հազարամյակներ առաջ: Ձեր մշակույթը լռության է մատնում շատ բաներ, որոնք այնքա՜ն բնական են և շատ հազարամյակների ընթացքում փոխանցվել են սերնդեսերունդ: Խոսքս վերաբերում է սեռական էներգիան ճիշտ ծախսելու մասին Ուսմունքին:

Աստվածամայր

3. Հատկապես այն բանով, թե ինչ վերաբերմունք ունեք ձեր այդ գաղտնի ուժի նկատմամբ, որոշվում է ձեր հետագա էվոլյուցիոն ուղին: Այն դեպքում, երբ կարողանում եք խելամտորեն օգտագործել ձեր սեռական էներգիան, դուք հաղթահարում եք ձեր կենդանական մասը և մոտենում Աստվածամարդուն: Իմ զրույցի նյութը շատերիդ կցնցի, քանի որ անցյալի ձեր գործելակերպն անխոցելի չի եղել: Ամեն անգամ, երբ չմտածված ու չարդարացված ձևով վատնում եք ձեր աստվածային կարողությունը, դուք կարմա եք ստեղծում: Ձեր ստեղծագործական կարողությունը, ստեղծագործական ունակություններն ու առողջությունն ուղղակիորեն կապված են այն բանի հետ, թե ինչպես եք կարողանում կառավարել ձեր սեռական էներգիան: Հասարակությունն այդ թեմայի շուրջ մանրամասն բացատրություններ չի տալիս ո՛չ դպրոցական դաստիարակության, ո՛չ էլ ապագա ծնողներ դաստիարակելու ընթացքում: Սակայն այս կարևոր թեման պետք է զբաղեցնի ձեր միտքը նաև այնժամ, երբ մտահոգվում եք, թե որքանով է հավանական, որ հետագայում կկարողանաք ճիշտ կերպով տնօրինել ձեր սեռական էներգիան:

Աստվածամայր

4. Սեռական էներգիան ուղղակիորեն կապված է ձեր ստեղծագործական կարողության հետ՝ մարդկային գործունեության ցանկացած բնագավառում որևէ բան արարելու ձեր ունակության հետ: Նաև ձեր սեռական էներգիան որպես վառելիք է օգտագործվում համբարձման ժամանակ: Այստեղից հետևում է, որ պետք է խնայողական, հատուկ խնայողական վերաբերմունք դրսևորել էներգիայի այդ տեսակի նկատմամբ: Դուք կարող եք առարկել ինձ, թե Աստված է էներգիա տալիս, հետևաբար այդ էներգիայի աղբյուրն անսահմանափակ է: Դա իրոք այդպես է, բայց պայմանով, որ արդեն օժտված լինեք այդ էներգիայի նկատմամբ ճիշտ վերաբերմունքով:

Աստվածամայր

5. Ի՞նչ եք կարծում, ինչու՞ նյութականացումը, տելեպորտացիան և դրանց պես շատ հրաշքներ հնարավոր չեն ձեր ժամանակներում: Պատճառներից մեկն այն է, որ Աստծո էներգիայի հոսքը դեպի ձեր մարմիններ առավելագույն չափով փակված է: Աստծո էներգիան մատչելի չէ ձեզ նույնիսկ այն չափով, որը հնարավոր էր դեռևս մի քանի հազարամյակ առաջ: Եվ այն բանին զուգընթաց, որ մարդկությունն ավելի ու ավելի է թաղվում տգիտության մեջ, Աստծո էներգիայի հոսքն ավելի շատ է արգելափակվում:

Աստվածամայր

6. Ձեզ տգիտություն է թվում այն, երբ չեք կարողանում օգտվել հեռուստացույցից, համակարգչից կամ բջջային հեռախոսից: Ո՛չ, տգիտություն է այն, երբ չեք հետևում համայն տիեզերքում գործող Աստծո Օրենքին: Եվ այդ Օրենքի կետերից մեկը հենց այն մասին է, որ անհրաժեշտ է խնայողաբար ծախսել սեռական էներգիան: Յուրաքանչյուր մարդ օժտված է որոշակի կարողությամբ, որը կարող է սպառվել ժամանակից շուտ: Իսկ այդ դեպքում ոչ միայն չեք կարողանա ի կատար ածել ձեր աստվածային պլանն ու աստվածային առաքելությունը, այլև կվերածվեք դատարկության՝ մարդու, որի ներսում ներկա չէ Աստված: Ձեր աչքերը կխամրեն, և ձեր երկրային կյանքի ընթացքում արդեն կվերածվեք կենդանի դիակի:

Աստվածամայր

7. Սեռական մշակույթը հասարակության ընդհանուր մշակույթի մաս պետք է կազմի: Այն, ինչ հիմա մենք տեսնում ենք, նման է հասարակության բարոյական անկման այն փուլին, որը եղել է Սոդոմի ու Գոմորի ժամանակներում: Հավանաբար լսել եք, թե ինչ կատարվեց այդ քաղաքների հետ: Մարդիկ կանգնած են էվոլյուցիոն զարգացման տարբեր աստիճանների վրա: Եվ շատ փոքր տոկոս են կազմում այն մարդիկ, որոնք ծննդյան օրից օժտված են Աստծո էներգիայի նկատմամբ ճիշտ վերաբերմունքով: Դրանք Սանատ Կումարայի մաքրակյացներն են: Ըստ էության, այդ մարդիկ շատ մեծ հոգիների լիակատար կամ մասնակի մարմնացումներ են:

Աստվածամայր

8. Կան նաև մարդիկ, որոնք ունակ են վերահսկելու իրենց սեռական էներգիան և այն պահելու որոշակի շրջանակներում: Բայց դրա համար նրանք պետք է իրազեկված լինեն այն մասին, թե ինչ հետևանքների կարող է հանգեցնել սեռական էներգիայի ավելորդ վատնումը: Հասարակության մեջ առկա վարվելակերպի կարծրատիպերն ու զանգվածային մշակույթը չեն նպաստում, որ այդ ասպարեզում ճիշտ վարվելակերպեր ձևավորվեն: Ուստի ծագում է գայթակղությունների նկատմամբ ներքին գիտակցված հակադրություն ձևավորելու անհրաժեշտություն: Եվ ոչ մի դեպքում չպետք է այդ թանկարժեք էներգիան ծախսել հաճույքներ ստանալու համար: Իդեալական կլիներ, եթե այդ էներգիան ծախսվեր միայն սերունդ տալու վրա:

Աստվածամայր

9. Ես խոսեցի երկու տեսակի մարդկանց մասին, որոնք ունակ են լրիվ կամ մասնակի վերահսկելու իրենց սեռական էներգիան: Մնացած մարդիկ, ցավոք սրտի, այդ հարցում անհամեմատ ցած են իջել կենդանիներից, քանզի այն, ինչ թույլ է տրվում տեղեկատվության զանգվածային միջոցներում ու համացանցում, այլ խոսքերով չես կոչի, քան բարոյական նորմերի լիակատար անկում: Ամենալուսավոր էներգիան, որը ձեզ նման է դարձնում Աստծուն, մարդկանց ուղեղներում կապվել է այլասերվածության և էլի ինչ-որ անմաքուր բանի հետ:

Աստվածամայր

10. Ձեր ուղեղներում պետք է կարգուկանոն հաստատվի: Այդ հարցում դուք պետք է Աստվածայինը ջոկեք սատանայականից: Հատիկը որոմից ջոկելն առաջին հերթին այդ հարցում պետք է լինի, քանի որ ձեր աշխարհում Աստծո էներգիայի ամենամեծ աղավաղումները հատկապես կապված են հնարավոր ամեն տեսակ սեռական աղավաղումների հետ: Ես ուրախ եմ, որ ինձ հաջողվեց զրույց վարել այս կարևոր թեմայով: Եվ է՛լ ավելի ուրախ կլինեմ, եթե այս ուղերձն ընթերցած մարդկանց մեջ գտնվեն բավարար քանակի անհատներ, որոնք, դրսևորելով վճռականություն ու համառություն, իրենց մեջ ուժ գտնեն, որպեսզի սանձեն ցանկություններն ու վեր հանեն իրենց Կունդալինիի էներգիան՝ որպես Աստծո Կամքին հավատարիմ լինելու նշան:
ԵՍ ԵՄ Մերապիս Բեյը:

Աստվածամայր

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս

Ամեն

Մայտրեյայի համառոտ

Վարդարան - 1

Ես ձեզ ցույց եմ տալիս պատրանքի բավիղից դուրս գալու Ուղին

(համառոտ Վարդարան՝ Մայտրեյայի 2013 թ-ի դեկտեմբերի 23-ի թելադրության հիման վրա)

Հանուն Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու:

Ամեն

Հավատո Հանգանակ

Հավատում եմ Միասնական Աստծուն՝

Երկնքի ու Երկրի Արարչին,

որ ներկա է համայն Կյանքում:

Հավատում եմ Նրա Օրենքի արդարությանը,

և հնազանդորեն ենթարկվում եմ

Նրա Օրենքի Իմաստությանը:

Հավատում եմ Երկնքի Արքայությանը՝

ինչպես Երկրի վրա, այնպես էլ Երկնքում:

Հավատում եմ Աստծո Միասնությանը՝

Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու:

Ամեն

Հայր մեր

Հայր մեր, որ Երկնքում ես,

սուրբ լինի Քո Անունը.

քո Թագավորությունը գա.

Քո Կամքը լինի Երկրի վրա, ինչպես որ Երկնքում է.

մեր ամենօրյա հացը տուր մեզ այսօր,

և ներիր մեր մեղքերը,

ինչպես որ մենք ենք ներում մեզ պարտք եղողներին.

և մի տանիր մեզ փորձության,

այլ փրկիր մեզ չարից,

քանզի Քոնն է արքայությունը

և զորությունը և փառքը հավիտենական.

Ամեն

Աստվածամայր

Ցնծա՛, Սուրբ Կույսդ Աստվածամայր,

Բարեշնորհ Մարիամ,

Տերը Քեզ հետ է.

օրհնյալ ես Դու կանանց մեջ,

և օրհնյալ է պտուղը որովայնիդ,

քանզի ծնեցիր մեր հոգիների Փրկչին:

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

1. ԵՍ ԵՄ Մայտրեյան, ձեզ այսօր այցի եմ եկել, որպեսզի Երկրի մարկության հետ կրկին հաղորդակցվելու զգացմունքն ապրեմ: Քաղցր է ձեզ այցելելն ու մտածելն այն մասին, որ ամեն մի իմ գալստյամբ մոտենում են Նոր Ժամանակները, երբ մարդկությունը վերջապես կկարողանա դուրս գալ իր զարգացման լուսավոր ուղին: Վաղ թե ուշ խավարի շրջանը հետևում կմնա: Վաղ թե ուշ կգա այն ուրախալի ժամանակը, երբ կկարողանաք հետ նայել ու գիտակցել այն մոլորությունների ողջ անդունդը, որում մարդկությունը գտնվել է հազարավոր տարիներով: Ժամը հասել է: Եկել է արթնացման ժամանակը: Դուք դեռևս ննջում եք և չեք շտապում քաղցր պատրանքի երազից դուրս գալ: Եկել է նոր իրականության մեջ արթնանալու ժամանակը: Իսկ այդ նոր իրականության և ձեր գիտակցության ներկայիս վիճակի միջև ընդամենը մեկ քայլ է ընկած: Մեկ քայլ: Եվ այդ քայլը դուք անպայման կանեք...

Աստվածամայր

2. Իսկ այսօր ես եկել եմ, որպեսզի ձեր Ուղու դժվարին հատվածում օգնեմ ձեզ: Եկել եմ, որ պատմեմ ձեր մասին, աշխարհում ձեր ունեցած դիրքի մասին: Եկել եմ, որպեսզի ձեզ հիշեցնեմ, որ մոտակա ժամանակներում դուք անպայման պետք է կատարեք ձեր վերջնական ընտրությունը: Իսկ այդ ընտրությունը վերաբերում է այն բանին, թե որոշում եք էվոլյուցիայի ուղով ընթանալ առա՞ջ, թե՞ գերադասում եք անցյալի գրկում մնալ՝ ընթանալով անցյալի ձախողված քաղաքակրթությունների ուղով: Այո, սիրելինե՛րս, անցյալում շատ քաղաքակրթություններ են եղել, որոնք կամեցել են ընթանալ իրենց ուզած ուղով: Եղել են ոչ միայն ձեր մոլորակում, այլ նաև ուրիշ մոլորակային համակարգերում:

Աստվածամայր

3. Էվոլյուցիայի ամբողջ գործընթացը բաղկացած է ձեր այն նախընտրանքներից, որոնք կատարում եք ինքներդ՝ օժտված լինելով կամքի ազատությամբ: Եթե ձեր ազատ կամքով չառաջնորդվեիք, ապա կգործեիք ըստ Վեհապետների կամքի և զարգանալ չէիք կարողանա: Քանզի ստիպված կլինեիք ենթարկվել ուրիշի կամքին: Երբ երեխան ծնվում է, սկզբնական շրջանում լրիվ կախված է լինում իր ծնողներից. ինքնուրույն չի կարողանում շարժվել, սնունդ ընդունել: Բայց հետո գալիս է այն փուլը, երբ մեծանալով երեխաները լքում են հայրական տունը և գործում ինքնուրույն՝ իրենց կյանքի պատասխանատվությունն ամբողջովին վերցնելով իրենց ուսերին: Սակայն իմաստուն երեխաները շարունակում են կապ պահպանել իրենց ցեղի ու իրենց ծնողների հետ, որ խորհուրդներ և օգնություն ստանան: Որոշակի իմաստով դուք մեր՝ Համբարձյալ Վեհապետներիս, երեխաներն եք: Ձեզնից յուրաքանչյուրի ներսում կա մեզնից մի մասնիկ՝ ձեր ապագա Աստվածայնության սաղմը:

Աստվածամայր

4. Ձեր մեջ կան անհնազանդ երեխաներ, որոնք մոռացել են իրենց ծագման ու իրենց երկնային խնամարկուների մասին և այնպես են տարվել պատրանքի իրենց խաղով, որ այդ վիճակում խիստ դժվարանում են հիշել, թե իրականում ովքեր են իրենք, ինչպես են հայտնվել որբերի ողբալի վիճակում և ինչ պետք է անեն, որպեսզի վերադառնան Հայրական Տուն: Ի տարբերություն շատ որբացած հոգիների, որոնք մոլորվել են ձեր աշխարհում՝ կան որոշակի թվով հոգիներ, որոնք հիշում են իրենց Աստվածային առաքելությունն ու Աստվածային ծագումը: Հենց այդ հոգիներին եմ ես այսօր դիմում և հանձն առնում նրանց Ձեռնադրումների Ուղու ղեկավարությունը: Դուք սակավաթիվ եք, բայց ես ձեզնից յուրաքանչյուրին շատ լավ գիտեմ և ձեզ հետ աշխատել եմ ձեր ունեցած շատ ու շատ մարմնավորումների ընթացքում:

Աստվածամայր

5. Աշխարհում ստեղծված ներկայիս իրավիճակը լրացուցիչ դժվարություններ է հարուցում մեր հաղորդակցության և մեր կապի համար: Ձեզնից շատերը մոռացել են ինձ: Բայց ես ձեզ հիշում եմ: Ամեն մեկիդ: Ուստի մերթ ընդ մերթ գալիս եմ, որպեսզի թարմացնեմ մեր հաղորդակցությունն ու կապը, որը չի ընդհատվել հազարավոր տարիներով: Նույնիսկ այն դեպքերում, երբ դուք այնքան եք թաղվում պատրանքի մեջ, որ մոռանում եք Աստծուն և Վեհապետներին, մեր կապը շարունակում է պահպանվել լինելիության ավելի նուրբ ոլորտներում:

Աստվածամայր

6. Ձեզնից շատերը նորից են անցնում իրենց Ուղու թեստերը: Շատերը նույնիսկ չեն էլ կարող գիտակցել, որ իրենց կյանքում տեղի ունեցող ամեն ինչը ոչ այլ ինչ է, քան թեստ, որոնցով իրենք կրկին ու կրկին անցնում են մարմնավորումից մարմնավորում: Իսկ հիմնական թեստը՝ նյութական որևէ բանի հետ կապվածություն չունենալն է: Եթե չափազանց կապված եք ձեր երեխաների, ծնողների, սիրելիների, իրեղենի հետ, ապա կյանքի հանգամանքները ձեզ կզրկեն ձեր կապվածության առարկայից: Գլխավոր ընտրությունը, որը դուք կատարում եք ձեր կյանքում ու կյանքից կյանք՝ Աստծո աշխարհի կամ պատրանքային աշխարհի օգտին ընտրություն կատարելն է: Երբ ընտրում եք պատրանքային աշխարհը, ձեզ կապում եք այդ աշխարհի հետ և շարունակում դրանում մարմնավորվել: Իսկ եթե Բարձրագույն աշխարհն եք ընտրում, ապա անցնում եք այդ աշխարհ:

Աստվածամայր

7. Մեր տիեզերքն այնպիսի հատկություն ունի, որ ամեն մարդ էվոլյուցիայի սանդուղքին զբաղեցնում է այն տեղը, որը համապատասխանում է իր գիտակցության զարգացման մակարդակին: Եվ եթե դուք հայտնվում եք ձեր աշխարհում, ուրեմն այդ աշխարհի հետ կապվածություն ունենալու պատճառով դուք մշտապես դա եք ընտրում: Որպես ձեր Ձեռնադրիչի՝ իմ խնդիրն այն է, որ ձեզ բացատրեմ ձեր կապվածություններն ու ցույց տամ ձեր Ուղու խոչընդոտները: Եվ միայն այնժամ, երբ ձեր ներսում հաղթահարում եք բոլոր

կապվածություններն ու ձեր էության անկատարությունները, հնարավորություն եք ստանում անցում կատարելու մի այլ, ավելի կատարյալ աշխարհ:

Աստվածամայր

8. Աշխարհների միջև ընկած էներգետիկական սահմանը կարող եք հաղթահարել միայն ձեր թրթիռները բարձրացնելու շնորհիվ: Սակայն ձեր աշխարհն ամեն ինչ անում է, որ ձեզ կապի իր հետ: Դուք հավատում եք ձեր պատրանքին, և այն ձեզ ներկայանում է որպես իրականություն: Ամեն մի նոր մարմնավորման հետ խաղը բարդանում է, և դուք հայտնվում եք ավելի վատ պայմաններում, որոնցում պետք է ցուցադրեք ձեր նկրտումն ու վճռականությունը, որպեսզի վերջապես դուրս գաք պատրանքի թակարդից:

Աստվածամայր

9. Ձեր պատրանքն այժմ շատ նրբաձաձուկ միջոցներ է կիրառում, որպեսզի ձեր գիտակցությունը մշտապես պահի թրթռանքի ցածր մակարդակի վրա: Այն ամենը, ինչ ձեր կյանքում ձեզ շրջապատում է, դեպի ավելի բարձր աշխարհներ տանող ձեր Ուղու վրա խոչընդոտներ ստեղծելու նպատակ է հետապնդում: Ժամանակակից ցանկացած արտադրություն ստիպում է ձեզ իջեցնելու ձեր թրթիռները և բառացիորեն զոռով ձեզ հեռացնում է Բարձրագույն աշխարհներից: Ուստի ձեր խնդիրն է՝ չենթարկվել պատրանքի խորամանկություններին և հոգևոր գործառույթների ու մեթոդների միջոցով այնպես մարզել հոգևոր մկանները, որ կյանքի ամենադժվարին իրադրություններում կարողանաք անկախ լինել պատրանքային ուժերից:

Աստվածամայր

10. Դուք գտվում եք ձեռնադրումների համար նախատեսված բուրգի ներսում: Եվ ահա ես ձեզ ցույց եմ տալիս պատրանքի լաբիրինթոսից դուրս գալու Ուղին: Արդյո՞ք շատերն են ունակ լսելու ինձ... Ես գիտեմ, որ իմ նվիրյալ բոդհիսատվաներն ունակ են լսելու և հետևելու ինձ՝ ինչպիսի պատրանքի մեջ էլ որ գտնվելիս լինեն: Այնտեղ, ուր մեկն անցնում է՝ կանցնեն միլիոնավոր հոգիներ: **ԵՍ ԵՄ Մայտրեյան:**

Աստվածամայր

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս

Ամեն

Մայտրեյայի համառոտ

Վարդարան - 2

Դուք ձեր երեխաներին պետք է այնպես վերաբերվեք,

ասես այդ ես՝ Տեր Մայտրեյան է եկել ձեզ մոտ

ձեր երեխայի կերպարանքով

(համառոտ Վարդարան՝ Մայտրեյայի 2009 թ-ի դեկտեմբերի 6-ի թելադրության հիման վրա)

Հանուն Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու:

Ամեն

Հավատո Հանգանակ

Հավատում եմ Միասնական Աստծուն՝

Երկնքի ու Երկրի Արարչին,

որ ներկա է համայն Կյանքում:

Հավատում եմ Նրա Օրենքի արդարությանը,

և հնազանդորեն ենթարկվում եմ

Նրա Օրենքի Իմաստությանը:

Հավատում եմ Երկնքի Արքայությանը՝

ինչպես Երկրի վրա, այնպես էլ Երկնքում:

Հավատում եմ Աստծո Միասնությանը՝

Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու:

Ամեն

Հայր մեր

Հայր մեր, որ Երկնքում ես,

սուրբ լինի Քո Անունը.

քո Թագավորությունը գա.

Քո Կամքը լինի Երկրի վրա, ինչպես որ Երկնքում է.

մեր ամենօրյա հացը տուր մեզ այսօր,

և ներիր մեր մեղքերը,

ինչպես որ մենք ենք ներում մեզ պարտք եղողներին.

և մի տանիր մեզ փորձության,

այլ փրկիր մեզ չարից,

քանզի Քոնն է արքայությունը

և զորությունը և փառքը հավիտենական.

Ամեն

Աստվածամայր

Ցնծա՛, Սուրբ Կույսդ Աստվածամայր,

Բարեշնորհ Մարիամ,

Տերը Քեզ հետ է.

օրհնյալ ես Դու կանանց մեջ,

և օրհնյալ է պտուղը որովայնիդ,

քանզի ծնեցիր մեր հոգիների Փրկչին:

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

1. ԵՍ ԵՄ Մայտրեյան: Որքա՜ն ուրախալի է ինձ համար, որ կրկին ձեր աշխարհ մուտք գործելու հնարավորություն ունեմ: Մանկան պես ուրախանում եմ, որովհետև ձեր աշխարհին հայացք նետե՛լն իսկ ինձ համար մեծ երազանք է: Ես մի՛շտ եմ ուզում գալ: Բայց Տիեզերական Օրենքը դա թույլ չի տալիս: Քանզի եթե ես հիմա գամ, ձեր գիտակցության մակարդակով ինձ չեք ճանաչի: Հանձին ինձ՝ դուք ակնկալում եք տեսնել ամենազոր Աստծու, իսկ ես մանկիկ եմ, թեև օժտված Մեծ Իմաստությամբ:

Աստվածամայր

2. Նայեցե՛ք ձեր երեխաներին: Նրանցից շատերի դեմքերը մեծ իմաստունների դեմքեր են հիշեցնում: Նայեցե՛ք նրանց աչքերին: Հենց նոր ծնված մանկիկը եկել է մեր Աշխարհից: Նա դեռ հիշում է մեր Աշխարհը: Բայց ի՞նչ է տեսնում իր շուրջը: Սոսկ իրարանցում, խառնաշփոթ: Ահավոր աղմուկ: Բայց չի տեսնում, որ ուզենաք իր մեջ տեսնել Աստծուն, ճանաչել այն գաղտնիքը, որը նա իր հետ բերել է ձեր աշխարհում բացելու համար:

Աստվածամայր

3. Իր կյանքի առաջին ամիսների ընթացքում երեխան կիսով չափ , դեռ ավելին՝ մեծ մասամբ դեռ մեր Աշխարհում է: Այդ ընթացքում դուք շատ բաներ կարող եք նրանից սովորել: Իհարկե, նա չի կարող ձեզ ուսուցանել խոսքով կամ գործողություններով, բայց կարող է ձեզ փոխանցել մեր Աշխարհի դրվածքը: Այդ դրվածքը երևում է նրա աուրայում: Շատերը ներքին մղումով ձգտում են հպվել մանկանը, գրկել, շոյել գլուխը: Անշուշտ, այդ ակամա գործողությունները ձեզ հնարավորություն են տալիս մանկան միջոցով հպվելու մեր Աշխարհին:

Աստվածամայր

4. Բայց, ավաղ, դուք մոռանում եք այն մասին, որ երեխան մեր Աշխարհից եկած բանբեր է, և կրկին անցնում եք ձեր սովորական գործերին՝ հեռուստացույց եք դիտում, խոսում հեռախոսով,երաժշտություն լսում: Եվ որոշ ժամանակ անց սկսում եք զարմանալ, թե ինչու՞ է ձեր մանկիկն անհանգիստ, լալկան, քմահաճ: Բայց չէ՞ որ ձեր արածներն այնքան շատ են

տարբերվում մեր Աշխարհից, որ երեխան մշտապես ցնցումներ է ունենում: Նա չի կարող ձեզ ստիպել, որ անջատեք աղմկոտ երաժշտությունը կամ հեռուստացույցը, չի կարող պահանջել, որ դադարեցնեք ձեր երկարաշունչ հեռախոսազրույցները: Նա իր դժգոհությունն արտահայտում է լացով և այդ կերպ ուզում է ձեզ հասկացնել, որ այդ ամենն իր համար ցանկալի բաներ չեն: Իսկ ձեզ այնպես է թվում, թե երեխան ուտել կամ խմել է ուզում կամ պարզապես հոգնել է և պետք է քնի:

Աստվածամայր

5. Երեխաների հանդեպ ձեր վերաբերմունքը վերանայման կարիք ունի: Դուք ձեր երեխաներին պետք է այնպես վերաբերվեք, ասես այդ ես՝ Տեր Մայտրեյաս եմ եկել ձեզ մոտ ձեր երեխայի կերպարանքով: Կանեի՞ք իմ ներկայությամբ այն բոլոր բաները, որ անում եք ձեր երեխայի ներկայությամբ՝ կարծելով, թե նա ոչինչ չի հասկանում: Կպահեի՞ք ձեզ այնպես, ինչպես պահում եք ձեր աշխարհում... Ես երբևէ մարմին կառնեմ, դա իմ նվիրական ցանկությունն է. բայց ես չեմ կարող դա անել, քանի դեռ փոխած չեք լինի ձեր վերաբերմունքը ձեր իսկ երեխաների նկատմամբ:

Աստվածամայր

6. Կյանքի առաջին ամիսներին երեխայի աուրան կարող է իր մեջ մի ողջ քաղաք տեղավորել: Հիրավի, Երկնքի բանբերն է լինում ձեր կողքին: Բայց արդյո՞ք արժանավայել կերպով եք դիմավորում Երկնքից իջած ձեր բանբերին: Դուք կարծում եք, թե ձեր երեխան դեռ ոչինչ չի հասկանում: Ձեզ թվում է, թե նա դեռ տհաս է և չի կարող իրականությունն այնպես ընկալել, ինչպես դուք: Երեխան ձեր աշխարհ է գալիս՝ իր հետ բերելով մի այլ աշխարհի պատկերացում: Նոր ծնված երեխաներից շատերը ձեռնադրումների երկրային դպրոցն ավարտած իմաստուն հոգիներ են լինում: Եվ ի՞նչ են նրանք տեսնում իրենց շուրջը՝ քչփչացող ծնողներ ու հարազատներ: Եվ ամբողջ շրջապատում չի գտնվում գոնե մեկը, որ հանձինս նրանց տեսներ այն իմաստուն հոգիներին, որոնք ի ծնե արդեն ամեն բան գիտեն:

Աստվածամայր

7. Հետզհետե երեխայի աուրան իր մեջ է ներառում ընտանիքի, քաղաքի, երկրի ողջ դրվածքը, և երեք տարեկան հասակում երեխան արդեն կորցրած է լինում մեր Աշխարհի ամեն մի հիշողություն: Նա հարմարվում և յուրացնում է ձեր սովորությունները, կապվածությունները, վարքի կարծրատիպերը: Երեք տարեկանում նա իր աուրայի մեջ արդեն կրում է ձեր բոլոր բացասական հոգեվիճակները, որոնցով դուք անցել եք կամ դեռ անցնում եք: Եվ եթե հեռուստացույց դիտելու կամ ռադիո լսելու հնարավորություն է ստեղծվում (իսկ դուք կարծում եք, թե նա քնած է կամ, միևնույնն է, ոչինչ չի հասկանում), երեխան ակամա ներառում է իր մեջ այն ողջ մղձավանջը, որը գետի պես հորդում է ձեր զանգվածային լրատվական միջոցներից: Եվ երեք տարի անց ձեր առջև արդեն տեսնում եք ոչ թե ձեր աշխարհ մուտք գործած հրեշտակի, այլ

աշխարհի բոլոր մեղքերով ծանրաբեռնված հոգու, որը մինչև իր այդ երկրային կյանքի ավարտը ստիպված է լինելու բեռնաթափել ընտանիքի, ազգի, երկրի և աշխարհի կարման:

Աստվածամայր

8. Ես չեմ կարող գալ ձեր աշխարհ, քանի դեռ այն պատրաստ չի լինի ինձ ընդունելու: Եվ եթե կարծում եք, թե ասածներս չեն համապատասխանում իրականությանը, չափազանցում կամ խտացնում եմ գույները, ապա դրանով է՛լ ավելի եք հետաձգում իմ գալստյան ժամկետը: Քանի դեռ ձեր աշխարհում պարահանդես վարողը տգիտությունն է, քանի դեռ պարզ ճշմարտությունները դուք ընկալում եք որպես հեքիաթներ, ես ձեր աշխարհում անելիք չունեմ:

Աստվածամայր

9. Ես, իհարկե, շատ եմ ուզում հնարավորինս շուտ մարմին առնել: Բայց, ավաղ, միայն դու՛ք կարող եք արագացնել իմ գալուստը: Հոգատար վերաբերմունք պետք է ցուցաբերեք ոչ միայն երեխաների հանդեպ. ֆիզիկական աշխարհում ապրող ամեն ոք սիրված լինելու իրավունք ունի: «Սիրի՛ր մերձավորիդ, ինչպես ինքդ քեզ», որքա՛ն վաղ է տրվել այս պատվիրանը... Տեր Հիսուսի տված այդ պատվիրանից հետո որքա՛ն շատ իրադարձություններ են տեղի ունեցել երկրագնդի վրա: Բայց և որքա՛ն զբաղված եք լինում դուք ձեր կյանքում. մշտապես զբաղված եք լինում ինչ-որ բաներով: Ժամանակը չէ՞ արդյոք, որ մի պահ կանգ առնեք և լսեք Հիսուսի Խոսքը, որը հենց ձեզ է ուղղված:

Աստվածամայր

10. Քանի՞ անգամ պետք է կրկնվեն պատգամները, որպեսզի վերջապես ի կատար ածվեն: Քանի՞ անգամ պետք է ուղերձներով գանք, որ հետո դուք սովորեք ոչ միայն կարդալ կամ լսել, այլ նաև ձեր կյանքում առաջնորդվել ստացած Ուսմունքով: Ես դեռ էլի՛ կգամ և կտամ իմ ուղերձները: Լիահույս եմ, որ երկրագնդի վրա կգտնվեն գոնե հարյուր մարմնավորված հոգիներ, որոնք ոչ միայն կկարդան դրանք, այլ նաև կկիրառեն իրենց կյանքում: **ԵՍ ԵՄ Մայտրեյան:**

Աստվածամայր

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս

Ամեն

Խաղաղության Էլոհիմի փոքր Վարդարան - 1

Աղոթքային ջանքերի կենտրոնացման նպատակով առաջարկվում է Վարդարանն ընթերցելուց առաջ հղել հետևյալ կոչը.

Հանուն ԵՍ ԵՄ, ՈՐ ԵՄ և հանուն Ամենակարող Տեր Աստծո՝

ես դիմում եմ բոլոր Համբարձյալ Դասերին, Լույսի Ուժերի Հիերարխիային,

որը ղեկավարում է մարդկության էվոլյուցիան

և ուղղորդում Երկրի մարդկության զարգացումը Աստվածային Ուղով:

Ես խնդրում եմ իմ աղոթքի էներգիան ուղղել բոլոր պատերազմական գործողությունների դադարեցման համար,

որոնք այժմ տեղի են ունենում Երկիր մոլորակի վրա՝

Ուկրաինայի հարավ-արևելքում, Սիրիայում, Գազայի հատվածում և այլուր:

Ես խնդրում եմ նաև, որ իմ աղոթքի էներգիան ի նպաստ դրվի այն ուժերի չեզոքացման համար,

որոնք մարդկությանը տանում են դեպի նոր համաշխարհային պատերազմ:

Թող Երկրում Խաղաղությու՛նը թագավորի...

Թող երջանի՛կ լինեն բոլոր կենդանի էակները...

Թող լավ լինի աշխարհի համար...

Ես խնդրում եմ, որ իմ աղոթքի էներգիան բազմապատկվի ամբողջ աշխարհում աղոթքային Արթնությանը մասնակցողների թվով

Թող ամեն ինչ Աստծո Սուրբ Կամքով լինի:

ԱՄԵՆ

* * *

Ձեր հիմնական խնդիրն է՝

բարձրացնել Երկիր մոլորակի մարդկանց գիտակցությունը

Հանուն Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու: Ամեն

Հայր մեր

Հայր մեր, որ Երկնքում ես,

սուրբ լինի Քո Անունը.

քո Թագավորությունը գա.

Քո Կամքը լինի Երկրի վրա, ինչպես որ Երկնքում է.

մեր ամենօրյա հացը տուր մեզ այսօր,

և ներիր մեր մեղքերը,

ինչպես որ մենք ենք ներում մեզ պարտք եղողներին.

և մի տանիր մեզ փորձության,

այլ փրկիր մեզ չարից,

քանզի Քոնն է արքայությունը

և զորությունը և փառքը հավիտենական.

Ամեն

Աստվածամայր

Ցնծա՛, Սուրբ Կույսդ Աստվածամայր,

Բարեշնորհ Մարիամ,

Տերը Քեզ հետ է.

օրհնյալ ես Դու կանանց մեջ,

և օրհնյալ է պտուղը որովայնիդ,

քանզի ծնեցիր մեր հոգիների Փրկչին:

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

1. ԵՍ ԵՄ Էլոհիմ Խաղաղությունը՝ Երկիր մոլորակի վրա ներկայումս ապրողներիդ այցի եկածս: Խոնարհ ողջույնս եմ հղում ձեզ, որ ձեր մեջ ուժ և արիություն եք գտել անցումային այս ժամանակներում մարմնավորվելու համար: Ձեզնից շատերը հույսով ու սրտի թրթիռով իրենց հայացքը հառում են ձեզնից նրանց, ովքեր չեն մոռացել իրենց սպասավորության ու այն երդման մասին, որը տվել են մարմնավորվելուց առաջ: Ձեր հիմնական խնդիրն է՝ բարձրացնել Երկիր մոլորակի մարդկանց գիտակցությունը: Այդ խնդիրը հիմա ամենակարևորն է դառնում: Քանզի այն բանից, թե որքանով կհաջողվի լուծել այդ խնդիրը, կախված է ապագան:

Աստվածամայր

2. Բոլորովին չէի ցանկանա, որ վախ զգաք ապագայից: Բոլոր դեպքերում Համբարձյալ Վեհապետները ձեզ հետ են և պատրաստ են դժվար պահերին օգնության ձեռք մեկնել: Նաև ես եմ այսօր եկել, որպեսզի խաղաղության էներգիա փոխանցեմ ձեր աշխարհին: Իմ էներգիաների զորությամբ այս գիշեր ճեղքվեցին անհասկացողության, ատելության ու թշնամանքի կապարե զրահները, որոնք հոծ օղակով շրջապատել էին մոլորակը: Իմ էներգիաները ձեզնից շատերի հոգիներում վերածնեցին ձգտումը դեպի խաղաղություն և անդորրություն:

Աստվածամայր

3. Ամեն ոք, ով կկարողանա այս դժվար ժամանակներում ներքուստ պահպանել էներգիաների համակշռություն, ներքին անդորր ու ներդաշնակություն, երաշխիք կստեղծի ամբողջ մարդկության կայուն զարգացման համար: Ուստի մի՛ դադարեք մտածել խաղաղության մասին, արտաքին աշխարհին առաքեք ներդաշնակություն և խաղաղության իմ էներգիաները փոխանցեք ձեր աշխարհին: Այժմ ես կուզենայի կանգ առնել այն հանգամանքի վրա, որ ձեզնից յուրաքանչյուրը կարող է և ունակ է համակշռելու Երկիր մոլորակի իրավիճակը:

Աստվածամայր

4. Չեմ թաքցնում՝ լինում են պահեր, երբ այդ համակշռությունը դժվար է լինում պահպանելը: Եվ երբեմն մեկը, ով գտնվելով կյանքի հորձանուտում և շրջապատված լինելով անբարենպաստ պայմաններով՝ անասելի ջանքերի գնով այնուամենայնիվ կարողանում է պահպանել ներքին համակշռությունը և աշխարհին առաքել իր սրտի սերը՝ դրանով իսկ կարողանում է կանխել հերթական պատերազմը կամ սոցիալական պայթյունը: Անցնող տարվա ընթացքում նման դեպքեր բազմիցս եղել են: Ամեն անգամ, երբ մեզ հակադիր ուժերը ճոճում էին նավակը, և թվում էր, թե հերթական պատերազմն ու արյունահեղությունն այլևս անխուսափելի են, գտնվում էր մեկը, որն իր ներքին վիճակով, ներքին նվաճումների և անկեղծ աղոթքի միջոցով հանդարտեցնում էր բացասական տարերքը:

Աստվածամայր

5. Համակշռության պահպանումը կհեշտանա, եթե մարդկությունն ամբողջապես գտնվի գիտակցության ավելի բարձր մակարդակի վրա: Գիտակցության մակարդակն է որոշում արտաքին հանգամանքները, կառավարում արտաքին ուժերի դրսևորումները և դասավորում ֆիզիկական աշխարհի հանգամանքները: Ուստի ամեն անգամ, նախքան ձեր էներգիան ներդնելը համակշռությունը խախտող որևէ գործունեության մեջ, մի պահ կանգ առեք և մտորեք: Կա՛մ դուք ձեր Աստվածային էներգիան ուղղորդում եք ավերածություն, բացասական դրսևորում և համակշռության խախտում առաջացնելուն, կա՛մ գերադասում եք պահպանել ներքին ներդաշնակություն և անդորրություն:

Աստվածամայր

6. Աշխարհին երբեմն տիրում են անորակ էներգիաները, և տարերքների կույր հոսանքը բազում կենսահոսքերի քշում-տանում է անորակ ուղով: Անցած 20-րդ դարի բոլոր պատերազմներն ու ժամանակակից պատմական շատ իրադարձությունները հենց այն բանի օրինակներ են, երբ որևէ անորակ միտք տիրած է եղել որևէ երկրի բնակչության որոշակի կրիտիկական զանգվածի գիտակցությանը: Դրանից հետո մարդիկ այլևս դրության տերը չեն լինում և դառնում են անորակ էներգիաների պատանդը: Արդյունքում ինչ-որ մեկի գիտակցության մեջ ծագած անորակ մտքի զոհն են դառնում միլիոնավոր մարդկային կյանքեր: Բայց նաև ճիշտ նույն կերպ, եթե որևէ բարեբեր միտք տիրում է զանգվածների գիտակցությանը, ապա ունակ է լինում փոխելու պատմության ընթացքը և մարդկությանն ուղղորդելու ավելի դյուրին Ուղով:

Աստվածամայր

7. Համբարձյալ Դասերը նուրբ ոլորտում նախապատրաստում են լուսավոր ապագայի ձևանմուշներ: Այդ ձևանմուշները պատրաստ են լինում իջանելու և փնտրում են այն հոգիներին, որոնք ունակ են դրանք կյանք մտցնել: Սակայն, որպեսզի դուք համահունչ դառնաք մեր թրթռանքին և ունակ լինեք ձեր աշխարհ իջեցնելու լուսավոր էներգիաներ, պետք է նախապես համալարվեք Բարձրագույն աշխարհների հետ: Սակայն պատրանքային ուժերն իրենց մերձիմահ կատաղության մեջ ջանում են զավթել և Ուղուց հանել հոգիներին՝ դրա համար օգտագործելով կեղծ ձևանմուշներ և դրսևորումներ:

Աստվածամայր

8. Դուք պետք է շատ լավ գիտակցեք, որ ձեր աշխարում գործում են բարու և չարի ուժեր: Եվ դուք ինքներդ եք ընտրում, թե ո՛ր ուժերի կողմը բռնեք: Հարկ է, որ կարողանաք գիտակից կերպով դասակարգել ձեր աշխարհի ամեն մի դրսևորում. այն է՝ ի՞նչ ուժեր են կանգնած տվյալ դրսևորման հետևում: Եթե ձեր մտքերով, հույզերով և գործողություններով աջակցում եք կեղծ, անաստված ձևանմուշներին, ապա ընդդիմություն եք դառնում զարգացման էվոլյուցիոն ուղու նկատմամբ: Դուք աջակցում եք պատրանքային ուժերին: Դուք ձեր գիտակցությամբ սահում եք դեպի ավելի ցածր մակարդակ: Եվ հակառակը՝ եթե դուք թույլ եք տալիս, որ Աստվածային դրսևորումներն արտահայտվեն ձեր միջոցով, եթե բարձրացնում եք ձեր և ձեր շրջապատի մարդկանց գիտակցությունը, ապա ընթանում եք ճիշտ ուղղությամբ և համակշռություն եք պահպանում շատ ու շատ մարմնավորված անհատների փոխարեն:

Աստվածամայր

9. Պետք է ձեզ ասեմ, որ Բարու և Լույսի յուրաքանչյուր այդպիսի գեներատոր ունակ է չեզոքացնելու մահվան ու դժոխքի ուժերի ամբողջական հրոսակախմբերի: Ես ի սրտե կամենում եմ, որ դուք միշտ հանդես գաք լուսավոր ուժերի կողմից: Այդ դեպքում մենք միասին կկարողանանք կանխել ցանկացած պատերազմ, ցանկացած ագրեսիա և ցանկացած ատելություն ու հակակրանք: Հավատացե՛ք ինձ, միայն ձեր գիտակցության մակարդակն է արգելք հանդիսանում հաջորդ էվոլյուցիոն մակարդակին անցնելու համար: Եվ դուք ինքներդ եք պատասխանատու, թե դեպի ուր եք ուղղում ձեր էներգիան: Մշտապես՝ դեպքերի 100 տոկոսով, միայն ինքներդ եք պատասխանատու ձեր այն էներգիայի ծախսման համար, որը մշտապես հոսում է ձեր էության, ձեր նուրբ մարմինների և ձեր չակրաների միջով:

Աստվածամայր

10. Միայն ինքներդ եք կրում ձեր Աստվածային էներգիան ծախսելու պատասխանատվությունը: Եվ համայն տիեզերքում չկա որևէ մարդ կամ էակ, որը ձեր փոխարեն ընտրություն կատարի: Դուք միշտ հնարավորություն ունեք կանգ առնելու և մտորելու՝ գործում եք Աստծո կամքին համահունչ, թե՞ ընդդեմ Աստծո: Ես շատ լավ հասկանում եմ, որ ձեր աշխարհում հաստատված

պայմաններում շատ դժվար է ընտրություն կատարելն ու իրավիճակը գնահատելը: Այդ պատճառով ավելի հաճախ ձեր կյանքում դիմեք Աստծուն և Համբարձյալ Դասերին, Աստվածային խրատներ և Աստվածային առաջնորդություն խնդրեք, և միշտ կստանաք դրանք: Ես այս օրով եղա ձեզ հետ: ԵՍ ԵՄ Էլոհիմ Խաղաղությունը:

Աստվածամայր

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

Հանուն Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու:

Ամեն

Խաղաղության Էլոհիմի փոքր Վարդարան - 2

Աղոթքային ջանքերի կենտրոնացման նպատակով առաջարկվում է Վարդարանն ընթերցելուց առաջ հղել հետևյալ կոչը.

Հանուն ԵՍ ԵՄ, ՈՐ ԵՄ և հանուն Ամենակարող Տեր Աստծո՝

ես դիմում եմ բոլոր Համբարձյալ Դասերին, Լույսի Ուժերի Հիերարխիային,

որը ղեկավարում է մարդկության էվոլյուցիան

և ուղղորդում Երկրի մարդկության զարգացումը Աստվածային Ուղով:

Ես խնդրում եմ իմ աղոթքի էներգիան ուղղել բոլոր պատերազմական գործողությունների դադարեցման համար,

որոնք այժմ տեղի են ունենում Երկիր մոլորակի վրա՝

Ուկրաինայի հարավ-արևելքում, Միրիայում, Գազայի հատվածում և այլուր:

Ես խնդրում եմ նաև, որ իմ աղոթքի էներգիան ի նպաստ դրվի այն ուժերի չեզոքացման համար,

որոնք մարդկությանը տանում են դեպի նոր համաշխարհային պատերազմ:

Թող Երկրում Խաղաղությու՛նը թագավորի...

Թող երջանի՛կ լինեն բոլոր կենդանի էակները...

Թող լավ լինի աշխարհի համար...

Ես խնդրում եմ, որ իմ աղոթքի էներգիան բազմապատկվի ամբողջ աշխարհում աղոթքային Արթնությանը մասնակցողների թվով

Թող ամեն ինչ Աստծո Սուրբ Կամքով լինի:

ԱՄԵՆ

* * *

Երկրի վրա խաղաղությունը կախված է գիտակցության այն մակարդակից,

որը կարող են Երկրի վրա դրսևորել Աստծո լավագույն ուստրերն ու դուստրերը

Հանուն Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու: Ամեն

Հայր մեր

Հայր մեր, որ Երկնքում ես,

սուրբ լինի Քո Անունը.

քո Թագավորությունը գա.

Քո Կամքը լինի Երկրի վրա, ինչպես որ Երկնքում է.

մեր ամենօրյա հացը տուր մեզ այսօր,

և ներիր մեր մեղքերը,

ինչպես որ մենք ենք ներում մեզ պարտք եղողներին.

և մի տանիր մեզ փորձության,

այլ փրկիր մեզ չարից,

քանզի Քոնն է արքայությունը

և զորությունը և փառքը հավիտենական.

Ամեն

Աստվածամայր

Ցնծա՛, Սուրբ Կույսդ Աստվածամայր,

Բարեշնորհ Մարիամ,

Տերը Քեզ հետ է.

օրհնյալ ես Դու կանանց մեջ,

և օրհնյալ է պտուղը որովայնիդ,

քանզի ծնեցիր մեր հոգիների Փրկչին:

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

1. ԵՍ ԵՄ Էլոհիմ Խաղաղությունը: Ես ձեզ այցի եմ եկել ձեր աշխարհում խաղաղություն հաստատելու ցանկությամբ: Ես գիտեմ, որ ձեր աշխարհն առաջվա պես կրում է գիտակցության այնպիսի անկատար դրսևորումների ազդեցությունը, ինչպիսիք են պատերազմները, բռնությունները: Գիտեմ, որ այդ ամենը տեղի է ունենում ձեր աշխարհում: Ես բերում եմ ձեզ իմ հույսն ու վստահությունը, որ ձեր աշխարհում ամեն ինչ կփոխվի:

Աստվածամայր

2. Մարդկության պատմության մեջ պատերազմները ժամանակավոր երևույթ են: Իհարկե, դուք ուսումնասիրել եք պատմությունը և կարող եք ինձ առարկել, որ ամբողջ պատմությունը լիքն է պատերազմներով ու զավթումներով, բռնությամբ ու արյունահեղությամբ: Ես դա գիտեմ, սիրելինե՛րս: Բայց նաև գիտեմ, որ դրանք ժամանակավոր են և ընդամենը ձեր անկատար գիտակցության արտահայտությունն են: Նաև գիտեմ, որ ձեզնից ամեն ոք, ով ապրում է Երկրի վրա, այնտեղ տեղի ունեցած ամեն մի արյունահեղության անմիջական մասնակիցն է: Դուք բոլորդ որոշակի մակարդակում միասնական էներգետիկական համակարգ եք ներկայացնում: Եվ այնտեղ, որտեղ ցասում ու ագրեսիա է իրականացվում որևէ անհատի կողմից, կազմավորվում է բացասական էներգիայի օջախ, որը համապատասխան տեղ է փնտրում երկրագնդի վրա, որպեսզի դրսևորվի:

Աստվածամայր

3. Դուք չեք կարող ասել, որ պատերազմների, բռնությունների համար մեղավոր են միայն այն մարդիկ, որոնք անմիջականորեն մասնակցում են կռվին: Ո՛չ, պարզապես այդ եղանակով դրսևորվում է մարդկության ընդհանրական գիտակցության անկատարությունը: Ուստի ես կոչ եմ անում, որ խաղաղություն հաստատեք ձեր սրտերում: Այն դեպքերում, եթե կարողանում եք լրիվությամբ վերահսկել ինքներդ ձեզ, եթե կարողանում եք պահպանել լիակատար հավասարակշռության վիճակ, երբ ձեր շուրջն ամեն ինչ փլուզվում է, ապա անձամբ Ես և Համբարձյալ Վեհապետները ձեր միջոցով կարող ենք ոռոգել մոլորակի խաղաղության մշտադալար ոսկե եղևնին և հանգցնել ցանկացած լարվածության օջախ: Այդ ամենը հնարավոր է անել, սիրելինե՛րս, և անել՝ իրապես: Մեզ միայն ֆիզիկական ոլորտում գտնվող կատարյալ անոթ է պետք՝ մարմնավորված մեկը, որն ունակ է խաղաղության էներգիան փոխանցելու ձեր հոծ աշխարհին:

Աստվածամայր

4. Այո՛, դա շատ հասարակ գործ է թվում, բայց իրականում ձեր աշխարհում շատ դժվար է հասնել գիտակցության այնպիսի մակարդակի, որ ձեր ողջ կյանքի ընթացքում կամ դրա մի որևէ հատվածում կարողանաք խաղաղության կատարյալ Աստվածային գիտակցությունը փոխանցել

ձեր ֆիզիկական ոլորտին: Ուստիև՝ պատերազմներն ու բռնությունները դեռևս շարունակվում են ձեր աշխարհում: Եվ ես կուզենայի, որ այսօր դուք մտորեք այն մասին, թե ինքներդ անձամբ ինչ կարող եք անել խաղաղության համար:

Աստվածամայր

5. Նորից կրկնում եմ, որ յուրաքանչյուրիդ մեջ կա մի բան, որը թույլ է տալիս, որպեսզի աշխարհում ագրեսիան պահպանվի: Մենք չենք կարող մի ակնթարթում հասնել գիտակցության նոր մակարդակի, որը զերծ է ագրեսիվությունից ու պատժելու ցանկությունից: Ըստ էության, ներկա գիտակցության արմատները դարերի խորքից են սկիզբ առնում, երբ մարդկանց գիտակցության մեջ կորսվեցին Աստվածային կերպերը: Եվ նրանց սկսեց թվալ, թե Աստված չափից դուրս շատ է դանդաղում պատժելու նրանց, ովքեր, ինչպես իրենք էին կարծում, արժանի են պատժի:

Աստվածամայր

6. Պատրանքն այնքան թանձրացավ, որ մարդիկ կորցրեցին իրենց Աստվածային տեսողությունն ու Աստվածային կողմնորոշիչները: Եվ նրանք որոշեցին Աստվածային արդարադատությունը փոխարինել իրենց գործողություններով: Նրանք այսպես էին մտածում. չարը պետք է պատժվի, և եթե իրենք դա չանեն, հապա ո՞վ պետք է անի:

Աստվածամայր

7. Հանուն Աստծո, հանուն արդարության ու բարու կատարված առաջին սպանության կարման անցած անհաշիվ հազարամյակների ընթացքում այնքան է խճճվել, որ հնարավոր չէ մի ակնթարթում կանգնեցնել այդ կարմայի իջանելը: Ցանկացած կարմա, ցանկացած էներգիա պետք է աստիճանաբար սպառի ինքն իրեն: Ուստի հնարավոր չէ հենց վաղվանից աշխարհում վերջ տալ բռնությանը: Այդ մասին կարելի է երազել, կարելի է ձգտել դրան, բայց բռնության կարման պետք է սպառի ինքն իրեն:

Աստվածամայր

8. Սակայն ձեզ հայտնի է, որ կարմայի վերադարձը կարող է տեղի ունենալ տարբեր ուղիներով: Ձեզ համար բռնության կարման կարող է վերադառնալ երրորդ համաշխարհային պատերազմի տեսքով: Բայց դա կարող է և կանխարգելվել: Եվ եթե բավարար քանակությամբ մարդիկ որոշեն իրենց կյանքերում բռնություն չգործադրել, այսինքն թե՝ մյուս այտն էլ դեմ տան, երբ մեկին խփում են, ահա եթե բավարար թվով մարդիկ ունակ լինեն դրսևորելու նման գիտակցության մակարդակ, ապա այդ մարդկանց սրտերով դրսևորված խաղաղարար հատկանիշները կմարեին բռնության ու պատերազմների կարման:

Աստվածամայր

9. Խոսքս վերաբերում է Քրիստոսի և Բուդդայի գիտակցության մակարդակին: Միայն գիտակցության այդ մակարդակով է հնարավոր ներքին խաղաղության ու հանգստության հատկանիշի լիակատար տիրապետումը: Ուստի ես ձեզ կոչ եմ անում, որ կատարելագործեք ձեր գիտակցությունը, որպեսզի աշխարհին ծառայեք այնպես, ինչպես Հիսուս ծառայեց՝ 2000 տարի առաջ մարմին առնելով:

Աստվածամայր

10. Աշխարհը ձեր սպասավորության կարիքն ունի: Երկրի վրա խաղաղությունը կախված է գիտակցության այն մակարդակից, որը կարող են Երկրի վրա դրսևորել Աստծո լավագույն ուստրերն ու դուստրերը: Հիմա ձեր ժամանակն է հասել, երբ պետք է դա անեք: Այլևս հետաձգելու հնար չկա: Ես այսօր այցելեցի ձեզ՝ Երկրի վրա խաղաղության բարի լուր բերելով: Իսկ այդ խաղաղությունն ամբողջովին ձեզնից է կախված՝ ձեր ներքին խաղաղությունից, որը դուք պետք է հյուսեք սեփական ջանքերով: ԵՍ ԵՄ Էլոհիմ Խաղաղությունը:

Աստվածամայր

Փառք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն և Աստվածամորը,

այժմ և միշտ հավիտյանս: Ամեն

Հանուն Հոր, Մոր, Որդու և Սուրբ Հոգու:

Ամեն

Փոքր Վարդարան՝

«ՄԻՍՏԻԿԱԿԱՆ ՊԱՀ»

Ես պատրաստ եմ, Տեր: Վերցրու՛ ինձ, Տեր, վերցրու իմ գիտելիքները, իմ ունակությունները: Օգտագործի՛ր ինձ, Տեր, Քո պլանների իրականացման համար: Ահա՛ իմ Ես-ը, Տեր: Ես հնազանդվում եմ Քո Կամքի և Քո Օրենքի առաջ: Չկա՛ այլևս իմ մեջ ոչինչ, որ Աստծուց չէ: Չկա՛ ոչինչ, որ մեզ բաժանի: Մենք միասնական ենք:

1. ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ: Եվ ես քո ներսից եմ գալիս: Այժմ, երբ ավարտվում է մի տարեշրջանը, և սկսվում հաջորդը, ճիշտ ժամանակն է հավերժի մասին մտածելու: Մոտ է տարվա և դարաշրջանի փոխվելու միստիկական պահը: Սակայն դա չի նշանակում, թե դարաշրջանը փոխվում է հենց այս պահին, այլ միայն նշանակում է, որ հավերժության այն պահը, երբ տեղի է ունենում դարաշրջանի փոփոխություն, արդեն մոտեցել է: Եվ հենց այդ պահին, ինչպես երբեք, անհրաժեշտ է հայացքն ուղղել հավերժին, միստիկականին, գաղտնախորհրդին:

ՕՄ

2. Այժմ շատ քիչ կան Բարձրագույն աշխարհները զգացող մարդիկ: Հավերժության կանխազգացումը մի շնորհ է, որը մարդը ձեռք է բերում ո՛չ մեկ մարմնավորման ընթացքում: Եվ որքան շատ են լինում մարմնավորման մեջ գտնվող այնպիսի մարդիկ, որոնք ունեն Բարձրագույն աշխարհները զգալու շնորհ, այնքան ավելի ներդաշնակ են ընթանում ֆիզիկական աշխարհի բոլոր իրադարձությունները: Քանզի ձեր էության ներսում հատկապես ներքին, միստիկական կապի բացվելն է, որ թույլ է տալիս, որ աստվածային փոփոխություններ տեղի ունենան ձեր աշխարհում:

ՕՄ

3. Ձեր աշխարհի լայնածավալ փոփոխությունները տեղի են ունենում ո՛չ կառավարությունների, ո՛չ էլ առանձին երկրների ու անձանց շնորհիվ: Բոլոր այդպիսի մեծ փոփոխություններն աշխարհում միշտ էլ տեղի են ունեցել բարձրագույն էներգիաների՝ ձեր աշխարհ ներթափանցելու շնորհիվ: Եվ երբ բարձրագույն էներգիաներն ի վիճակի են լինում ներթափանցելու ֆիզիկական աշխարհ, ամեն ինչ սկսում է շատ արագ փոխվել՝ բառացիորեն հենց ձեր աչքի առաջ: Եվ հիմա մենք կանգնած ենք հենց այն ժամանակի, այն դարաշրջանի շեմին, երբ մարմնավորման մեջ գտնվող ավելի ու ավելի շատ մարդկային անհատների ներսում աշխարհները կմիանան իրար:

ՕՄ

4. Շատ կենսահոսքերի կյանքի խնդիրը, նպատակն ու իմաստն այժմ հատկապես այն է, որ իրենց գիտակցության մեջ պահեն ու պահպանեն Բարձրագույն աշխարհների հետ կապը, աշխարհների միջև հաստատվող կապը: Այնժամ, երբ բավարար քանակությամբ մարդկային

անհատներ ունակ են լինում իրենց գիտակցությամբ հասնել Բարձրագույն աշխարհներին, բոլոր փոփոխությունները, աստվածային փոփոխություններն ի կատար են ածվում:

ՕՄ

5. Այսպիսով, ես պնդում եմ, որ ձեզնից յուրաքանչյուրը ժամանակ գտնի, որպեսզի անցկացնի իր միստիկական փորձը, միստիկական իր փորձարարությունը: Դուք պետք է ժամանակ գտնեք, որպեսզի մտորեք հավերժականի ու անցողիկի մասին: Հավերժական արժեքների և ժամանակավոր հրապուրանքների մասին: Զգաք դրանց տարբերությունները և հասկանաք, թե հատկապես ո՛ր ուղղությամբ եք ուզում շարժվել:

ՕՄ

6. Ներկայումս յուրաքանչյուրին, ով ունակ է միստիկական փորձառության, համարում են տարօրինակ և կյանքին չհարմարվող: Սակայն միշտ չէ, որ այդպես կլինի: Այսուհետ ավելի ու ավելի շատ կմարմնավորեն այնպիսի մարդկային անհատականություններ, որոնք իրենց հիշողության մեջ կունենան Բարձրագույն աշխարհների հուշը: Եվ շատ շուտով նման անհատականությունները տիրապետող դիրք կգրավեն աշխարհում: Որովհետև դրա՛ ժամանակն է եկել: Ժամանակը հասել է, և տարածությունը փոխվում է: Աշխարհները մերձեցել են և պատրաստ են փոխներթափանցման:

ՕՄ

7. Երբ պատրանքն իր վերջին ջղաձգությամբ փորձում է պահպանել իր դիրքերը, ավելորդ չի լինի, որ ձեզ հիշեցնեմ ձեր աստվածային ծագման մասին: Նաև ձեր այն ներքին բնույթի մասին, որը հատուկ է ձեզ և թույլ չի տալիս քաղցր քնի մեջ մնալ պատրանքի մեջ: Ժա՛մն է արթնանալու Բարձրագույն իրականության համար: Հասե՛լ է դրա ժամկետը: Դուք դանդաղում եք և չեք ուզում բաժանվել պատրանքի ձեր քաղցր քնից, սակայն Աստծո Իրականությունն իր ուժով ու գեղեցկությամբ գերազանցում է ձեր ֆիզիկական աշխարհի ցանկացած ամենալավ դրսևորմանը: Արդ, մղվե՛ք դեպի ձեր իրական բնույթը՝ դեպի Աստվածայինը: Փնտե՛ք ձեր ներսում խաղաղ միստիկական նշաններ: Եվ այնժամ, երբ կհամալարվեք Բարձրագույն իրականության հետ, ֆիզիկական աշխարհի փոփոխությունները տեղի կունենան ինքնըստինքյան:

ՕՄ

8. Արդյոք ձեր շուրջը շա՞տ եք տեսնում այնպիսի մարդկանց, որոնք մտածում են Բարձրագույն իրականության մասին և համալարված են այդ Բարձրագույն իրականության հետ: Կարծում եմ, որ ոչ: Այդպիսի մարդիկ քիչ կան մարմնավորման մեջ: Եվ հենց դա է պատճառն ամեն մի անարդարության, որ գոյություն ունի ձեր աշխարհում. դա է պատճառը բնության երևույթների բոլոր աններդաշնակ դրսևորումների և մարդկային հասարակության մեջ տեղի ունեցող զանգվածային անկարգությունների:

ՕՄ

9. Ձեր գիտակցության մեջ պետք է բևեռափոխություն տեղի ունենա, որպեսզի կողմնորոշվեք դեպի հավերժական արժեքները. ահա դա՛ է մարդկային էվոլյուցիայի այն փուլը, որի շեմին այժմ

կանգնած է մարդկությունը: Ձեզ անհրաժեշտ է գիտակցել այս պարզ ճշմարտությունը, որի շեմին հիմա կանգնած եք: Ուղղակի անհրաժեշտ է, որ ձեր գիտակության մեջ հնարավոր համարեք Բարձրագույն իրականության գոյությունը: Եվ դա այն անհրաժեշտ ու բավարար քայլը կլինի, որն ունակ կլինի ձևափոխության ենթարկելու ձեր շուրջը եղած ամեն ինչ:

ՕՄ

10. Համբարձյալ Դասերը պատրաստ են ձեզ օգնություն ցուցաբերելու: Սակայն, որպեսզի այդ օգնությունը հասնի ձեզ, դուք պետք է հավատաք այն իրականությանը, որում գոյություն ունեն Համբարձյալ Դասերը: Հավատ Բարձրագույն իրականության նկատմամբ, ձգտում դեպի Բարձրագույն աշխարհները. ահա այն, ինչն ունակ է մարդկությանը դուրս հանել պատրանքի քաղցր քնից:

Հասել է արթնացման ժամը:

Ծագում է հավերժական իրականության արևը:

Ես կանչում եմ ձեզ դեպի այդ անանց իրականությունը: Հենց հիմա:

ՕՄ

Ես պատրաստ եմ, Տեր: Վերցրու՛ ինձ, Տեր, վերցրու իմ գիտելիքները, իմ ունակությունները: Օգտագործի՛ր ինձ, Տեր, Քո պլանների իրականացման համար: Ահա՛ իմ Եսը, Տեր: Ես հնազանդվում եմ Քո Կամքի և Քո Օրենքի առաջ: Չկա՛ այլևս իմ մեջ ոչինչ, որ Աստծուց չէ: Չկա՛ ոչինչ, որ մեզ բաժանի: Մենք միասնական ենք:

33-օրյա ԱՂՈԹՔԱՅԻՆ ԱՐԹՆՈՒԹՅՈՒՆ

1 օգոստոսի, 2014 թ. - 2 սեպտեմբերի, 2014 թ.

Տեր Շիվայի Վարդարան

Աղոթքային ջանքերի կենտրոնացման նպատակով առաջարկվում է Վարդարանն ընթերցելուց առաջ հղել հետևյալ կոչը.

Հանուն ԵՍ ԵՄ, ՈՐ ԵՄ և հանուն Ամենակարող Տեր Աստծո՝

ես դիմում եմ բոլոր Համբարձյալ Դասերին, Լույսի Ուժերի Հիերարխիային,

որը ղեկավարում է մարդկության էվոլյուցիան

և ուղղորդում Երկրի մարդկության զարգացումը Աստվածային Ուղով:

Ես խնդրում եմ իմ աղոթքի էներգիան ուղղել բոլոր պատերազմական գործողությունների դադարեցման համար,

որոնք այժմ տեղի են ունենում Երկիր մոլորակի վրա՝

Ուկրաինայի հարավ-արևելքում, Սիրիայում, Գազայի հատվածում և այլուր:

Ես խնդրում եմ նաև, որ իմ աղոթքի էներգիան ի նպաստ դրվի այն ուժերի չեզոքացման համար,

որոնք մարդկությանը տանում են դեպի նոր համաշխարհային պատերազմ:

Թող Երկրում Խաղաղությու՛նը թագավորի...

Թող երջանի՛կ լինեն բոլոր կենդանի էակները...

Թող լավ լինի աշխարհի համար...

Ես խնդրում եմ, որ իմ աղոթքի էներգիան բազմապատկվի ամբողջ աշխարհում աղոթքային Արթնությանը մասնակցողների թվով

Թող ամեն ինչ Աստծո Սուրբ Կամքով լինի:

ԱՄԵՆ

Այժմ սկսվում է ձեր աշխատանքն Աստծո համար

Ես պատրաստ եմ, Տեր: Վերցրու՛ ինձ, Տեր, վերցրու իմ գիտելիքները, իմ ունակությունները: Օգտագործի՛ր ինձ, Տեր, Քո պլանների իրականացման համար: Ահա՛ իմ Եսը, Տեր: Ես հնազանդվում եմ Քո Կամքի և Քո Օրենքի առաջ: Չկա՛ այլևս իմ մեջ ոչինչ, որ Աստծուց չէ: Չկա՛ ոչինչ, որ մեզ բաժանի: Մենք միասնական ենք:

1. Ես եմ Շիվան... Ես եկա... Ուղերձի ամեն մի ընդունման և ընթերցման ժամանակ դուք օրհնանքի արժանանալու հնարավորություն եք ստանում: Իսկ դա այնպիսի բան է, որը հնարավոր չէ արտահայտել բառերով: Այն, անկախ խոսքերից, իմ սրտից փոխանցվում է ձեր սրտերին: Արժանացե՛ք օրհնանքի: Ընդունեցե՛ք իմ սրտի շնորհը:

ՕՄ

2. Ձեզ կվիճակվի շատ բան անել: Հենց հիմա է հասել այն ժամանակը, երբ մարմնավորման մեջ գտնվող ձեզնից յուրաքանչյուրից է կախված Երկիր մոլորակի էվոլյուցիայի հետագա ողջ ընթացքը: Քանզի ձեր օկտավայում տեղի է ունենում էներգիաների վճռական շրջադարձ: Եվ այն, ինչ գահավիժում էր ցած, այժմ պետք է սկսի վեր բարձրանալ դեպի մեր աշխարհը՝ դեպի Համբարձյալ Դասերի աշխարհը: Մոտակա ժամանակներում ձեր ձեռքերով ու ոտքերով պետք է ի կատար ածվի տիեզերական բոլորաշրջանի այդ մեծ շրջադարձը: Եվ ես, որ հանդիսանում եմ պատրանքի հետ-հավաքման պատասխանատու Տերը, պատրաստ եմ ձեզ փոխանցել հինավուրց ժամանակների գիտելիք:

ՕՄ

3. Ձեզնից ամեն ոք դառնում է անփոխարինելի: Ամեն ոք, ով ունակ է և պատրաստ է ընկալելու իմ խոսքերն ու էներգիաները: Քանզի դրա ժամանակը հասել է, և այս պահին բոլոր Երկնային Դասերը հետևում են Երկիր մոլորակի էվոլյուցիայի ընթացքին: Հասել է մոլորակի պատմության ամենաբեկումնային պահը: Եվ ձեզնից յուրաքանչյուրի ընտրությամբ է որոշվում ամբողջ մոլորակի ապագան: Դա այն ընտրությունն է, որը հիմա դուք պետք է կատարեք: Եվ ես ասում եմ ձեզ, որ ձեր կյանքում չկա ավելի կարևոր բան, որ կարողանայիք անել:

ՕՄ

4. Մի կողմ նետեք այն ամբողջ ունայնը, որը շրջապատում է ձեզ: Ձեր գիտակցությունը բևեռեք ձեզ համար հնարավոր առավելագույն բարձր կետի վրա: Մտածեք հավերժականի մասին: Մտածեք անվերջ ու անսահման Աստծո մասին: Մտածեք Նրա Փառավորության մասին: Դուք Աստծո մաս եք: Ձեզնից յուրաքանչյուրի ներսում Նա կարող է ներկա լինել: Եվ ձեր օգնությամբ այս տիեզերքի Արարիչը կկարողանա շրջադարձել տիեզերական բոլորաշրջանը: Մտորե՛ք ձեզ վիճակված առաքելության վեհության մասին: Ձեզնից ամեն ոք կարող է և ունակ է ի կատար ածելու պատրանքի հետ-հավաքման՝ Աստծո վիթխարի մտահղացումը:

ՕՄ

5. Ժամանակը հասավ, և բոլորաշրջանը փոխվեց: Այժմ պատրանքը հետ հավաքելու ժամանակն է արդեն: Եվ դա կատարվում է ճիշտ այնպես, ինչպես այն ժամանակ, երբ սկսվեց Արարումը. եկավ այն շրջադարձային կետը, երբ Արարվածը պետք է հետ հավաքվեր: Տարածությունն ու ժամանակը սկսում են նոր բոլորաշրջան: Պատրանքը սկսվում է հետ հավաքվել: Ձեզնից յուրաքանչյուրը կոչված է մասնակցելու պատրանքի հետ-հավաքման այդ գործընթացին: Այժմ ոչ ես, ոչ էլ որևէ մի ուրիշ Բարձրագույն Վեհապետ չենք կարող ներկա գտնվել ձեր աշխարհում: Չափազանց կոպիտ է ձեր աշխարհը, և չափազանց ցածր են նրա թրթռանքները: Միայն դուք կարող եք կատարել այդ աշխատանքն աշխարհի համար: Միայն դուք կարող եք ձեր նախընտրանքներով ու գործողություններով իրականացնել պատրանքի հետ-հավաքման այդ աշխատանքը: Միայն ձեր գիտակցության օգնությամբ Աստված կարող է կատարել այդ աշխատանքը՝ վիթխարի այն աշխատանքը, որի իրականացման համար պահանջվում են միլիոնավոր տարիներ: Այժմ ձեզ հնարավորություն է տրվում ձեռնամուխ լինելու այդ առաքելությանը:

ՕՄ

6. Եվ եթե դուք վերընթերցեք այս վերջին տարիներին մեր դեսպանորդի միջոցով ձեզ տրված բոլոր թելադրությունները, ապա դրանցում կգտնեք բոլոր անհրաժեշտ հանձնարարականները, որպեսզի կատարեք ձեր աշխատանքը և ավարտեք ձեր Աստվածային առաքելությունը: Յուրաքանչյուր թելադրություն պարունակում է ձեզ անհրաժեշտ գիտելիք ու տեղեկատվություն: Տողատակերում պահված գիտելիքներ կան,

որոնք ձեր գիտակցության մեջ երկար տարիների ընթացքում աստճանաբար բացվում են ձեր քնի և արթնության ժամանակ:

ՕՄ

7. Բանալին, որ կտամ ձեզ այսօր, մակերեսի վրա է: Ձեր ամենօրյա նախընտրանքները՝ օրվա ընթացքում կատարած ձեր ամեն մի ընտրությունն ու արարքը, եթե ունեն Աստվածային բնույթ, ապա հենց այն աշխատանքն են առաջ տանում, որը դուք պարտավոր եք կատարել: Իսկ եթե առաջվա պես նախընտրում եք կենտրոնանալ պատրանքի վրա, տրվել հաճույքներին ու ձեր էգոյի քմայքներին՝ ինչպիսիք էլ դրանք արտահայտվելիս լինեն, ապա դրանով հանդերձ հակադրվում եք Աստծուն և Նրա պլաններին:

ՕՄ

8. Նշանակություն ունի ձեր յուրաքանչյուր միտքը: Նշանակություն ունի ձեր յուրաքանչյուր հույզը: Նշանակություն ունի ձեր յուրաքանչյուր գործողությունը:

Այժմ սկսվում է ձեր աշխատանքն Աստծո համար: Ձեր ամեն մի արարքը կամ ուշադրության կենտրոնացումը պատրանքի վրա՝ կհակադրվի Աստծո պլաններին: Համընդհանուր Բարօրությանն ու Բարուն ուղղված ձեր ամեն մի գործողությունը կողջունվի Երկնքի կողմից և մեզ համար նշան կլինի, որ մարդկությունն ունակ է ընթանալու էվոլյուցիոն զարգացման ուղով և անցնելու իր զարգացման նոր փուլին:

ՕՄ

9. Այժմ ձեր գիտակից լինելուց, նկրտումներից ու հավատից շատ բան է կախված: Եվ այս օրով ես եկել եմ, որ ձեզ հիշեցնեմ ձեր պարտքի և այն աշխատանքի մասին, որը ձեզնից բացի ոչ ոք չի կարող կատարել՝ պատրանքի հետ-հավաքման վիթխարի աշխատանքի մասին: Եվ դա ձեր ամենակարևոր աշխատանքն է՝ գիտակցության մեջ հավերժականն անցողիկից բաժանելը: Ձեր ներսում և ձեզնից դուրս իրականը պատրանքայինից առանձնացնելու գործը ձեր ամենակարևոր աշխատանքն է հիմա:

ՕՄ

10. Որտեղ կենտրոնացված է ձեր ուշադրությունը, այնտեղ էլ հոսում է ձեր էներգիան: Եվ եթե մշտապես կենտրոնացած եք պատրանքային աշխարհի վրա, ապա գործում եք ընդդեմ Աստծո՝ բազմապատկելով պատրանքը: Իսկ եթե մշտապես կենտրոնացած եք Բարձրագույնի՝ Աստվածային աշխարհի վրա, ապա Երկինքը կփառավորի ձեզ: Հասել է այն ժամանակը, երբ Երկինքը սպասում է ձեր աշխատանքին: Խնդրու՛մ եմ, գիտակցե՛ք ձեր պատասխանատվությունը և սկսեք հենց հիմա: Ամեն ինչ արդեն գիտեք: Սկսե՛ք... Ժամանակի ամեն պահի դուք արարում եք: Կառավարում եք ձեր էներգիան: Մնում է

միայն, որ համալարվեք Աստծո հետ, որպեսզի ձեր էներգիայի հոսքը մշտապես Աստվածային հոսքի հետ լինի:

ՕՄ

Ես պատրաստ եմ, Տեր: Վերցրու՛ ինձ, Տեր, վերցրու իմ գիտելիքները, իմ ունակությունները: Օգտագործի՛ր ինձ, Տեր, Քո պլանների իրականացման համար: Ահա՛ իմ Եսը, Տեր: Ես հնազանդվում եմ Քո Կամքի և Քո Օրենքի առաջ: Չկա՛ այլևս իմ մեջ ոչինչ, որ Աստծուց չէ: Չկա՛ ոչինչ, որ մեզ բաժանի: Մենք միասնական ենք:

Վարդարան

Հավատի

ՕՄ ՆԱՄԱՀ ՇԻՎԱՅԱ

Տե՛ր, օգնի՛ր ինձ, Տե՛ր.

Ես գիտեմ, որ Դու կաս: Ես գիտեմ, որ Դու լսում ես ինձ:

Ես հավատում եմ Քո զորությանն ու բարեգթությանը:

Ես սիրում եմ Քեզ, Տե՛ր, և հավատում եմ, որ այն, ինձ արել ես ինձ համար, միայն այն բանի համար է եղել, որ գամ դեպի Քեզ:

Ների՛ր ինձ, Տե՛ր, այն ամենի համար, որ արել եմ իմ չիմացությամբ:

Երախտապարտ եմ Քեզ, Տե՛ր, քո գիտության և այն բանի համար, որ թույլ տվիր ինձ անցնելու բոլոր փորձություններով և պատվով դիմանալու դրանց:

Օգնի՛ր ինձ, Տե՛ր, որ գտնեմ Քեզ և կյանքում երբեք այլևս չբաժանվեմ Քեզնից:

ՕՄ ՆԱՄԱՀ ՇԻՎԱՅԱ

ՕՄ

Ամենայն ինչ Աստված է

ՕՄ ՆԱՄԱՀ ՇԻՎԱՅԱ

1. Ամենայն ինչ Աստված է: Այն, ինչ ձեզ շրջապատում է և այն, ինչ տեսնում եք, որքան աչքներդ կտրում է՝ Աստված է:

ՕՄ

2. Դուք էլ եք Աստված: Այո', դուք Աստված եք՝ մարմնավորման մեջ, բայց միայն այն դեպքում, եթե պահպանում եք որոշակի պայմաններ, որոնք անհրաժեշտ են, որպեսզի ձեր Աստվածային բնույթը դրսևորվի:

ՕՄ

3. Ես ձեզ կուսուցանեմ, թե ինչ է անհրաժեշտ անել, որպեսզի վերածվեք Աստծո: Նախ և առաջ դուք պետք է սիրեք ու պաշտեք Աստծուն այն ամենի մեջ, ինչը ձեզ շրջապատում է:

ՕՄ

4. Չկա ոչինչ, որ բաժանի ձեզ կյանքի յուրաքանչյուր մասնիկից՝ սկսած ամենափոքրիկ մրջյունից և վերջացրած ամենազարգացած Գուրուով: Դուք հանդիսանում եք այդ ամենը և միաժամանակ հանդիսանում եք Աստծո անհատականացումը ֆիզիկական սահմանափակ կաղապարի մեջ:

ՕՄ

5. Եվ հենց այդ կաղապարն է, որ ձեզ առանձնացնում է ամբողջական Աստվածայնությունից: Այդ կաղապարը ձեզ տրված է ժամանակավորապես, որպեսզի միլիոնավոր տարիների ընթացքում դուք երկրային կյանքի փորձառություն անցնեք՝ մտնելով հազարավոր և տասնյակ հազարավոր երկրային մարմնավորումների մեջ:

ՕՄ

6. Դուք օգտագործում եք այդ կաղապարն այն նպատակների համար, որոնք ձեր առջև դրված են Աստծո կամքով: Աստված կամենում է դրսևորել իրեն ձեր ֆիզիկական կաղապարի միջոցով: Եվ ձեր խնդիրն է՝ հնարավորություն տալ Աստծուն դրսևորել իրեն ձեր միջոցով:

ՕՄ

7. Դուք պետք է ձեր կյանքը ենթարկեցնեք այն Աստծուն, ով դուք ինքներդ եք: Եվ դա յուրաքանչյուր մարդու խնդիրը: Դուք պետք է խնամք տածեք ձեր կաղապարի նկատմամբ, պահեք նրան կարգին վիճակում, սնեք նրան անհրաժեշտ ամեն ինչով:

ՕՄ

8. Սակայն երբեք դուք չպետք է մոռանաք, որ դուք Աստված եք և, հետևաբար, չեք կարող անել այն, ինչ անարժան է Աստծուն:

ՕՄ

9. Հայացք նետեք ձեր կյանքին, ձեր կյանքի հանգամանքներին: Արդյո՞ք ամեն ինչ է համապատասխանում Աստվածային ստանդարտին:

ՕՄ

10. Դուք պետք է ուշադրություն դարձնեք ձեր կյանքի բոլոր կողմերին. ինչո՞վ եք սնվում, ի՞նչ եք հագնում, ու՞մ հետ եք շփվում, ինչպե՞ս եք վարվում ձեր հարազատների ու ծանոթների հետ: Նրանք նույնպես հանդիսանում են կաղապարված Աստվածներ: Եվ նրանց նկատմամբ ձեր վերաբերմունքը պետք է նմանվի Աստծո նկատմամբ վերբերմունքին:

ՕՄ

ՕՄ ՆԱՄԱՀ ՇԻՎԱՅԱ

ՕՄ

Ապագան կապված է

ճշմարիտ հավատի ավանդույթների վերականգնման հետ

ՕՄ ՆԱՄԱՀ ՇԻՎԱՅԱ

ՕՄ

1. Կարող եք գնալ տաճար կամ եկեղեցի: Դուք այնտեղ տեսնում եք Աստվածությունների պատկերներ: Դուք երկրպագում եք այդ Աստվածություններին: Սակայն մեծ տարբերություն չկա ձեր, ձեզ շրջապատող մարդկանց և տաճարի Աստվածությունների միջև:

ՕՄ

2. Մենք բոլորս մեզնից ներկայացնում ենք Աստվածության դրսևորումներ: Իհարկե, մենք կանգնած ենք Աստվածության դրսևորման տարբեր աստիճանների վրա, բայց դա առանձնապես մեծ նշանակություն չունի:

ՕՄ

3. Համաձայնեք, որ եթե դուք ձեզ վերաբերվեք որպես Աստծու, և նաև՝ վերաբերվեք ձեզ շրջապատող մարդկանց որպես Աստվածների, ապա ձեր կյանքը կփոխվի: Եվ այնքան արագ կփոխվի, որքան տևական ու լրիվ կկարողանաք ձեր գիտակցության մեջ պահել Աստվածության կերպարը: Ահա թե ինչու է ձեզ անհրաժեշտ Աստվածության նկար ունենալ տանը, աշխատավայրում:

ՕՄ

4. Շատ կարևոր է մշտապես աչքի առաջ ունենալ նմանակման նմուշօրինակ: Ձեր աշխարհը կաղապարների աշխարհ է հանդիսանում, այդ պատճառով ձեզ համար հատկապես շատ կարևոր է՝ անընդհատ տեսապատկերել ձեր առջև այն Աստվածությանը, որը դուք հանդիսանում եք: Համաձա՞յն եք ինձ հետ:

ՕՄ

5. Դուք դառնում եք այն, ինչին ձգտում եք, և ինչ կերպարներ որ մշտապես պահում եք ձեր գիտակցության մեջ:

ՕՄ

6. Նայեցե՛ք, թե ինչով եք շրջապատված տանը, փողոցում, ուշադրություն դարձրեք այն պատկերներին, որոնք տեսնում եք որպես զովազդներ, որոնցով ողողված են ձեր հեռուստահաղորդումները: Ի՞նչ եք կարծում. այն, ինչ ձեզ շրջապատում է՝ նմա՞ն է արդյոք Աստվածային իրականությանը:

ՕՄ

7. Ես ձեզ առաջարկում եմ Աստված դառնալու ամենահեշտ ուղին: Դուք պետք է ձեզ մեկուսացնեք անկատար կերպարներից և փոխարենը շրջապատվեք կատարյալ Աստվածային կերպարներով: Ընդ որում՝ ոչ մի նշանակություն չունի, թե որ կրոնին կամ հավատին է պատկանում այդ կերպարը:

ՕՄ

8. Դրանք պետք է լինեն կերպարներ, որոնք վեր են հանում ձեր գիտակցությունը, հնարավորություն են տալիս գտնվել, որքան հնարավոր է՝ ավելի կատարյալ գիտակցության վիճակում, որն առավելագույնս մոտարկված կլինի կատարելության Աստվածային թրթռումներին:

ՕՄ

9. Արևմուտքի մարդիկ Աստվածություն պաշտել չգիտեն և չեն կարողանում ճիշտ վերաբերվել Աստվածությանը: Ըստ այդմ՝ ես խորհուրդ եմ տալիս ուսումնասիրել Հնդկաստանի ավանդույթները՝ մի երկրի, որում պահպանված են Աստվածության պաշտամունքի ավանդույթները: Դա երկիր է, որտեղ գնահատում են այն մարդկանց, ովքեր իրենց կյանքը նվիրաբերում են Աստվածությանը ծառայելուն: Աշխարհի ոչ մի ուրիշ երկրում ստեղծված չեն Աստծուն ծառայելու այնպիսի պայմաններ, ինչպիսիք կան Մայր Հնդկաստանում:

ՕՄ

10. Ապագան կապված է ճշմարիտ հավատի ավանդույթների վերականգնման հետ: Հավատ, որը հիմնված է ոչ թե Աստվածության արտաքին պաշտման վրա, այլ ներքին Աստվածության պաշտման վրա, որը գտնվում է յուրաքանչյուր մարդու ներսում:

ՕՄ

ՕՄ ՆԱՄԱՀ ՇԻՎԱՅԱ

ՕՄ

Ճշմարիտ Աստված սրտում է պահված

ՕՄ ՆԱՄԱՀ ՇԻՎԱՅԱ

1. Աճող սերնդի դաստիարակությունը՝ յուրաքանչյուր մարդու ներսում գտնվող Աստվածությանը երկրպագելու ավանդույթ ստեղծելով և ավագ սերնդի նկատմամբ հարգանք սերմանելով, հանդիսանում է առաջնահերթ խնդիր:

ՕՄ

2. Աստվածության ցանկացած արտաքին կերպար անհրաժեշտ է միայն որպես հիշեցում ինքներդ ձեզ՝ ձեր Աստվածային բնույթի, ինչպես նաև բոլոր ձեզ շրջապատող մարդկանց Աստվածային բնույթի մասին:

ՕՄ

3. Աստվածության երկրպագությունը ոչ մի ընդհանուր բան չունի կրոնի հետ: Կրոնը հանդիսանում է արտաքին ուղի, որն անհրաժեշտ է որոշակի փուլում. բայց չի կարելի չափազանց շատ ուշադրություն հատկացնել այդ ուղուն:

ՕՄ

4. Հնդկաստանում շատ տաճարներ կան, որտեղ ծառայում են Աստվածություններին: Բայց և հնդկաստանում կան շատ իմաստուններ, յոգեր, որոնք ուսուցանում են երկրպագել Աստվածությանը սրտի ներսում, ուսուցանում են, թե ինչպես անմիջական կապ ստեղծել ներսի Աստծո հետ և այն Աստվածությունների հետ, որոնք միշտ պատրաստ են մարդու հետ հաղորդակցության:

ՕՄ

5. Ձեր ներքին աշխատանքը մշտապես հետևյալում է՝ կայանալ որպես Աստվածային դրսևորում և հրաժարվել ներքին այն ամենից, ինչն Աստվածային չէ:

ՕՄ

6. Ամեն անգամ, երբ փորձում եք ձեր ներսում գտնել մի բան, ինչն անիրական է, և այդ հատկանիշը պատվանդանի վրա դնում Աստվածայինի փոխարեն, դա այլ բան չէ, քան շեղում Ուղուց: Եվ դուք պետք է աչալուրջ վերահսկեք նման պահերը:

ՕՄ

7. Ձեր կյանքերում դուք կբախվեք ձեր մերձավորների, կողակիցների, զավակների և այլ ձեզ սիրելի մարդկանց աստվածացման հետ: Կբախվեք առարկաների, ճոխության իրերի, փողերի աստվածացման հետ: Կբախվեք նաև ուժի և իշխանության աստվածացման հետ:

ՕՄ

8. Դուք շատ բաներ կդնեք պատվանդանին և կխոնարհվեք այդ կուռքերին Աստծո փոխարեն: Սակայն կանցնի բավական ժամանակ, և դուք կսկսեք գլխի ընկնել, որ չկա ոչինչ, որ կարողանար զբաղեցնել ձեր սրտերում առկա ճշմարիտ Աստվածության տեղը:

ՕՄ

9. Ձեզնից որոշներն արդեն սկսել են հասկանալ այս հասարակ ճշմարտությունը: Եվ քանի որ շատ աստվածություններ են պատվանդաններից տապալվել հենց ձեր կամ կյանքի հանգամանքների շնորհիվ, ապա արդեն վախենու՛մ եք հերթական անգամ զրկվել որևէ բանի հետ ունեցած ձեր կապվածությունից:

ՕՄ

10. Ուստի և՝ շատերդ կասկածամտությամբ եք մոտենում այն ճշմարիտ Աստծուն, որը պահ է մտել ձեր սրտում և ուզում է հարաբերակցվել ձեզ հետ:

ՕՄ

ՕՄ ՆԱՄԱՀ ՇԻՎԱՅԱ

ՕՄ

Ինչպես սրտում գտնել Աստծուն

ՕՄ ՆԱՄԱՀ ՇԻՎԱՅԱ

1. Մի՛ երկյուղեք: Վերջապես եկել է ժամանակը, երբ ձեզ վիճակված է հանդիպել Աստվածայինի իրական դրսևորման հետ: Ձեզ վիճակվա՛ծ է հանդիպել ձեր ներսի Աստծո հետ: Եվ դա տեղի կունենա միայն այնժամ, երբ դուք մեկը մյուսի հետևից պատվանդանից ցած կգլորեք կեղծ կուռքերին:

ՕՄ

2. Մի՛ երկյուղեք: Միշտ առկա է չափանիշ, որով կկարողանաք կեղծ աստվածների ու աստվածուհիների բազմության մեջ զանազանել ճշմարիտ Աստծուն: Եվ հենց ինքնե՛րդ մշտապես գիտեք, թե երբ եք ձեր կյանքում առնչվում ճշմարիտ Աստծո ի հայտ գալու հետ:

ՕՄ

3. Այնժամ, երբ դուք հանգիստ եք, խաղաղված, և ձեր սիրտը լի է Աստվածային անդորրով, ապա ոչ ոք ձեզ չի կարող համոզել, թե չեք գտել ճշմարիտ Աստծուն: Դա հնարավոր չէ շփոթել որևէ այլ բանի հետ:

ՕՄ

4. Սակայն ձեզնից շատերը դեռ շարունակում են փնտրել և գտնել կեղծ աստվածներ և կուռքեր: Ի՞նչ անեք, որ չմոլորվեք. ինչպե՞ս ձեր սրտում գտնեք ճշմարիտ Աստծուն:

ՕՄ

5. Ճշմարտությունն այստեղ այն է, որ դուք չեք կարողանա գտնել ճշմարիտ Աստծուն այնքան ժամանակ, քանի դեռ չեք հրաժարվել կեղծ աստվածներից և ձեր աշխարհի հետ ունեցած կապանքներից:

ՕՄ

6. Եթե դուք փորձում եք գտնել Աստծուն, որպեսզի իրականացնեք ձեր որևէ մղումը կամ դրսևորեք ձեր որևէ հատկանիշը, ապա չե՛ք կարողանա ճշմարիտ Աստծուն:

ՕՄ

7. Չեք կարողանա գտնել ճշմարիտ Աստծուն այնքան ժամանակ, քանի դեռ ողջ սրտով չեք ձգտում դեպի Նա, քանի դեռ չեք կարողացել հրաժարվել ձեր ցանկացած զուտ մարդկային նկրտումներից, այդ թվում նաև՝ Աստծուն պաշտելու ձեր ձգտումից:

ՕՄ

8. Ձեզ համար դժվար է դրան հավատալ և դա հասկանալ, սակայն շատ մարդիկ Աստծո նկատմամբ ճշմարիտ հավատը փոխարինում են աստվածության կույր պաշտումով:

ՕՄ

9. Աստծո արտաքին պաշտամունքը ոչ մի ընդհանուր բան չունի Աստվածության ներքին պաշտման հետ:

ՕՄ

10. Եվ Աստծո արտաքին պաշտամունքը միայն առաջին՝ ամենաառաջին, քայլն է այն ուղու, որը տանում է դեպի ճշմարիտ Աստվածություն, որ նստած է ձեր սրտի գահին:

ՕՄ

ՕՄ ՆԱՄԱՀ ՇԻՎԱՅԱ

ՕՄ

Դուք կգտնեք Աստծուն

ՕՄ ՆԱՄԱՀ ՇԻՎԱՅԱ

1. Ձեզնից յուրաքանչյուրը պետք է մերձենա՛ Աստծուն: Ձեզնից յուրաքանչյուրն անխուսափելիորեն կմերձենա իր այն Աստծուն, որը նստած է իր սրտի գահին: Սակայն ձեզնից յուրաքանչյուրը դեռ կփնտրի՛ շատ աստվածների, որոնք տեղ են գտել տաճարներում ու եկեղեցիներում, վանքերում ու մզկիթներում:

ՕՄ

2. Դուք երկա՛ր կփնտրեք ձեր Աստծուն: Բայց դուք կգտնեք Նրան այն հրաշալի օրը, երբ ձեզ կթվա, թե կյանքը ձեզ համար լրիվությամբ կորցրել է իմաստը, և որ չկա աշխարհում ոչինչ, որի հետ ձեզ կապված զգաք:

ՕՄ

3. Դուք ձեր կյանքում կնստեք կոտրած տաշտակի առաջ, ձեր ընտանիքի, ձեր աշխատանքի և էլի ինչ-որ բանի փլուզման առաջ. այն ամենի առաջ, ինչը ձեզ համար նշանակալից էր, և էլ չկա: Եվ ահա այն պահին, երբ ձեր աշխարհում ոչինչ չի մնա, որի հետ ձեզ կապված եք զգում, վերջին հույսով ձեր հայացքը կհառեք դեպի երկինք:

ՕՄ

4. Եվ կասեք ձեր սրտում. «Տե՛ր, օգնի՛ր, Տե՛ր: Ես գիտե՛մ, որ Դու կաս: Ես գիտե՛մ, որ Դու լսում ես ինձ: Ես հավատու՛մ եմ Քո զորությանն ու բարեգթությանը»:

ՕՄ

5. «Ես սիրու՛մ եմ Քեզ, Տե՛ր, և հավատում եմ, որ այն ամենն, ինչ արել ես ինձ հետ, անհրաժեշտ է եղել, որպեսզի մոտենամ Քեզ»:

ՕՄ

6. «Ների՛ր ինձ, Տե՛ր, այն ամենի համար, ինչ արել եմ չիմացությամբ: Շնորհակա՛լ եմ Քեզ, Տե՛ր, Քո գիտության և այն բանի համար, որ թույլ տվեցիր ինձ անցնելու բոլոր փորձություններն ու պատվով դիմանալու դրանց»:

ՕՄ

7. «Օգնի՛ր ինձ, Տե՛ր, գտնելու Քեզ և կյանքում այլևս երբեք չբաժանվելու Քեզնից»:

ՕՄ

8.Եվ այդ պահին ձեզ կթվա, թե Երկինքները բացվել են: Դուք կզգաք այն, ինչը երբևէ չեք զգացել ձեր կյանքում: Կհասկանաք, որ այն ամենն, ինչին ձգտում էիք, արդեն ունեք և միշտ ունեցել եք: Եվ այդ ամենը ձեր ներսում է՝ ձեր սրտում, բայց դուք մինչև ձեր կյանքի այդ պահը, երբ արդեն ձեր ականջները լսում են և աչքերն էլ տեսնում, չեք կամեցել ո՛չ լսել, ո՛չ էլ տեսնել:

ՕՄ

9. ԵՍ ՀԱՎԱՏ ունեմ և ՀՈՒՅՍ, որ ձեզնից յուրաքանչյուրը նման զգացում կամ արդեն ապրել է, կամ դեռ կապրի: Եվ հուսով եմ, որ այդ զգացումը ձեր մեջ այնպիսի անջնջելի հետք կթողնի, որ դուք մշտապես՝ մինչև ձեր այս կյանքի ավարտը, կմնաք Աստծո հետ համահունչ վիճակում:

ՕՄ

10. Եվ կյանքի ինչպիսի դժվարին իրավիճակում էլ հայտնվելու լինեք, դուք այլևս ձեր ձախորդություններից ու դժբախտություններից հետո չեք հայհոյի Աստծուն և չեք մեղադրի Նրան: Դուք կհասկանաք և կընդունեք, որ ձեր բոլոր ձախորդությունների ու դժբախտությունների համար մեղավոր եք եղել դուք ինքներդ, քանի որ զոռոզությունն ու տգիտությունն էին ձեզ պարուրել: Եվ այդ տգիտությունն էլ հենց փակում էր ձեր աչքերը:

ՕՄ

ՕՄ ՆԱՄԱՀ ՇԻՎԱՅԱ

ՕՄ

Տե՛ր, օգնի՛ր ինձ, Տե՛ր.

Ես գիտեմ, որ Դու կաս: Ես գիտեմ, որ Դու լսում ես ինձ:

Ես հավատում եմ Քո զորությանն ու բարեգթությանը:

Ես սիրում եմ Քեզ, Տե՛ր, և հավատում եմ, որ այն, ինձ արել ես ինձ համար, միայն այն բանի համար է եղել, որ գամ դեպի Քեզ:

Ների՛ր ինձ, Տե՛ր, այն ամենի համար, որ արել եմ իմ չիմացությամբ:

Երախտապարտ եմ Քեզ, Տե՛ր, քո գիտության և այն բանի համար, որ թույլ տվիր ինձ անցնելու բոլոր փորձություններով և պատվով դիմանալու դրանց:

Օգնի՛ր ինձ, Տե՛ր, որ գտնեմ Քեզ և կյանքում երբեք այլևս չբաժանվեմ Քեզնից:

ՕՄ ՆԱՄԱՀ ՇԻՎԱՅԱ